Ազգ
Azg
21 ԱՊՐԻԼ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 71(4690)
ISSN: 1829-1651

# Քիմ Քարդաշյանը վրդովված է

Լոս Անջելեսում հրատարակվող «Դեյլի մեյլ» պարբերականի փոխանցմամբ, Քիմ Քարդաշյանն իր վրդովմունքն է արտահայտել այն առթիվ, որ «Կոսմոպոլիտան» հանդեսի թուրքական տարբերակի ապրիլյան համարի շապիկին տպագրվել է իր նկարը:

«Կոսմոպոլիտան» հանդեսն աշխարհի տարբեր լեզուներով է հրատարակվում եւ գաղափար չունեի, որ միջազգային ֆոտոլրագրության համար արված իմ նկարը թուրքերը կօգտագործեն հենց այս՝ ապրիլ ամսվա համարի համար, հաշվի առնելով, որ ապրիլը Ցեղասպանության զոհերի հիշատակի ամիսն է»:

Հակառակ կիսով չափ հայ լինելուն (հայրը՝ Ռոբերտ Քարդաշյանը երրորդ սերնդի ամերիկահայ է: Նրա նախնիները Էրկրից են Լոս Անջելես գաղթել), նա հայտարարել է, որ հպարտ է իր արմատներով եւ հայ նախնիներով: «Հպարտ եմ նաեւ, որ «Կոսմոպոլիտան»-ի շապիկի առաջին էջում եմ տպագրվում, բայց եթե ինձ հետ խորհրդակցած լինեին, թույլ չէի տա, որ ապրիլ ամսում տպագրեն նկարս», ասել է նա: Այս մասին նյութը վերոնշյալ պարբերականից արտատպել է «Արմինյըն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթն իր ապրիլի 16-ի համարում:

Հ. Ծ.

# «Մեր ծրագրերը պետք է համակարգված լինեն»

## Արա Աբրահամյանը կարեւորում է երկրի նախագահից ստացած աջակցությունը ծրագրերի իրագործման գործում

***Այս օրերին հերթական անգամ Հայաստանում էր Համաշխարհային հայկական կոնգրեսի (ՀՀԿ) եւ Ռուսաստանի հայերի միության (ՌՀՄ) նախագահ Արա Աբրահամյանը: Այս անգամ եւս նրա գալու նպատակը ՀՀԿ եւ ՌՀՄ կողմից երկրում իրականացվելիք ազգանպաստ ծրագրերի համակարգումն էր: Արա Աբրահամյանի հետ մեր հարցազրույցն առնչվում էր այդ ծրագրերի բովանդակությանը, դրանց մասին երկրի նախագահի հետ ունեցած քննարկումներին եւ նրա ցուցաբերած մոտեցմանը:***



**- Պրն Աբրահամյան, յուրաքանչյուր անգամ Դուք Հայաստան եք այցելում որոշակի ծրագրերով եւ նպատակներով: Ո՞րն է հերթական անգամ Ձեր Հայաստան այցելելու նպատակը եւ ի՞նչ քննարկեցիք երկրի նախագահ Սերժ Սարգսյանի հետ Ձեր հանդիպման ժամանակ:**

- Այս այցը կարեւոր նշանակություն ուներ: Ես հանդիպեցի Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հետ, քննարկեցինք Ռուսաստանի հայերի միության 10-ամյակի միջոցառման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունները այն մասին, որ պետք է հստակեցնեինք մեր ծրագրերը եւ ներկայացնեինք նախագահին: Այդ ծրագրերից է հատկապես Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության կողմից տարիներ շարունակ անցկացվող գիտական եւ ստեղծագործական լավագույն աշխատանքների ամենամյա մրցանակաբաշխությունը: Մրցանակաբաշխության նպատակն է նպաստել Հայաստանի գիտական եւ ստեղծագործական մտավորականության գործունեության ակտիվացմանը, աջակցել երկրի մտավոր կյանքի աշխուժացմանը:

Մրցանակաբաշխությունը անց է կացվում ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ, ՀՀ կրթության եւ գիտության, մշակույթի նախարարությունների օժանդակությամբ եւ աջակցությամբ:

Մրցանակաբաշխության գործընթացում ընդգրկված են Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան, Հայաստանի Գրողների, Կոմպոզիտորների, Ժուռնալիստների, Նկարիչների միությունները:

Մյուս կարեւոր կրթամշակութային ծրագիրը «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով դպրոցականների եւ ուսանողների շրջանում անցկացվող յոթերորդ մրցույթն է: Այս մրցույթը եւս անց է կացվում ՀՀ սփյուռքի եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունների հետ համատեղ:

2008-ից ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ հայկական ազգային բանակի բոլոր զորամասերում անց ենք կացնում «Լավագույն զինվոր, լավագույն սպա» մրցանակաբաշխությունը:

Նախագահը ուշադիր ծանոթացավ այդ ծրագրերին, նշեց, որ դրանք համակարգված մոտեցում ունեն, ասաց, որ անձամբ իր կողմից եւս այդ մասին հրահանգ կուղղի նախարարություններին: Հիշեցնեմ, որ Ռուսաստանի հայերի միության համագումարի ժամանակ ՀՀ նախագահը իր ելույթում նշեց, որ ստեղծվելու է խումբ, որը պետք է նախապատրաստի բիզնես-ծրագրեր եւ որոնց շնորհանդեսները պետք է կատարենք սփյուռքում:

Տես էջ 2

# Դեղին փոշին քամին բերել էր Սիրիայի անապատներից

**Երեկ առավոտից մայրաքաղաքում մառախլապատ էր, փոշու ամպը ամենուր էր: Կեսօրին քաղաքի բարձրադիր վայրերում տեղացած կարճատեւ անձրեւն այդ փոշին վերածեց ցեխի, անմիջապես տրանսպորտի ու մարդկանց վերնահագուստների վրա դեղին փոշու հետքեր նկատվեցին:**

**«Ազգը» «Հայհիդրոմետ» ծառայության օպերատիվ հիդրոօդերեւութաբանության կենտրոնի պետ Զարուհի Պետրոսյանից ճշտեց, թե նման երեւույթը ինչի հետեւանք է: «Հանրապետության տարածքը գտնվում է հարավային, հարավ-արեւմտյան օդային հոսանքների ազդեցության ներքո: Նմանատիպ հոսքերը մեր տարածաշրջան կարող են տեղափոխել փոշի եւ ավազ»: ՀՀ բնապահպանության հայէկոմոնիտորինգի տվյալների վերլուծության եւ պահպանման բաժնի ղեկավար Լիանա Մարգարյանից տեղեկացանք, որ դեղին փոշին եկել է «Սիրիայի անապատներից՝ քամու միջոցով եւ որպես քիմիական բաղադրություն վնասակար ոչ մի հատկություն չի ներկայացրել: Երեկվա եւ այսօրվա տվյալներով օդի բաղադրության որեւէ փոփոխություն, պայմանավորված դեղին փոշիով, չի գրանցվել՝ որեւէ արտառոց դեպք չի գրանցվել: Դիտվել է փոշու նորմայի գերազանցում, որը նախորդ օրերին նույնպես գերազանցել է: Փոշին շատ մանր հատիկավոր է եղել եւ չի հասցրել օդում իր վնասակարությունը գործել: Քամին ու անձրեւը նպաստել են, որ փոշին նստի: Իսկ 1,7-1,8 փոշու առկայությունը գրեթե ամեն օրվա միջին ցուցանիշն է», մանրամասնեց մասնագետը:**

**Առաջիկա օրերին հանրապետությունում ժամանակ առ ժամանակ տեղումներ կդիտվեն: Ձերմաստիճանը 21-23-ը կնվազի 4-5 աստիճանով: Ապրիլի 24-ին սպասվում են անձրեւ եւ քամի:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Վարույթ կարագի եւ բուսական յուղի գերիշխող «Ալեքս գրիգի» նկատմամբ

**Ինչպես տեղեկացանք տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովից, մանրածախ առեւտրի կետերում հանձնաժողովի ամենօրյա դիտանցումներով արձանագրվել է, որ վերջին շրջանում կարագի եւ բուսական յուղի շուկաներում նկատվում են գնային փոփոխություններ: Այդ առթիվ երեկ հանձնաժողովը որոշեց վարչական վարույթ հարուցել վերոնշյալ 2 շուկաներում գերիշխող «Ալեքս գրիգ» ընկերության նկատմամբ:**

**Օրենքով սահմանված ժամկետում «Ալեքս գրիգը» պետք է հանձնաժողովին տեղեկատվություն ներկայացնի իր կողմից իրացվող կարագի եւ բուսական յուղի ձեռքբերման եւ իրացման գների վերաբերյալ: 5-օրյա ժամկետում վերոնշյալ ընկերությունը պետք է ներկայացնի նաեւ հիմնավորումներ թանկացման վերաբերյալ:**

**Հաղորդագրության մեջ տեղեկացվում է նաեւ, որ հանձնաժողովի նախորդ տարվա ուսումնասիրություններով՝ իրացման ծավալներով «Ալեքս գրիգը» զբաղեցնում է կարագի շուկայի ավելի քան 1/3-ը՝ 35,4 տոկոսը, իսկ արեւածաղկի եւ եգիպտացորենի ձեթի շուկաներում՝ 37,5 տոկոսը:**

Ա. Մ.

# «Ղարաբաղ. պատմությունը գրվում է երկու տարբերակով»

BBC-ի ռուսական ծառայությունը ռեպորտաժ է պատրաստել Ղարաբաղի վերաբերյալ: Հեղինակ Օլեգ Բոլդիրեւն այն անվանել է՝ «Ղարաբաղ. պատմությունը գրվում է երկու տարբերակով»: Ռեպորտաժում հակամարտության վերաբերյալ ներկայացված են ինչպես Ստեփանակերտի, այնպես էլ Բաքվի դիրքորոշումները: Բոլդիրեւն այցելել է Ղարաբաղ, եղել Ստեփանակերտում, Շուշիում, զրուցել իշխանության ներկայացուցիչների եւ պատերազմը վերապրած քաղաքացիների հետ: Ռեպորտաժում արձանագրվում է, որ «Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ սահմանը մնում է աշխարհում ամենաամրացվածներից մեկը, եւ դիպուկահարների կրակից հաճախ են մարդիկ զոհվում»: BBC-ի լրագրողը նաեւ փաստում է, որ չնայած 1994-ին կնքված հրադադարի պայմանագրին, «16 տարվա ընթացքում Հայաստանը, Ադրբեջանը եւ Լեռնային Ղարաբաղը այդպես էլ լիակատար խաղաղության չեն հասել»:

Ռեպորտաժն ամբողջությամբ հնարավոր է դիտել BBC-ի ռուսական ծառայության կայքում:

Հ. Ա.

# Հրանուշ Հակոբյանն ընդունեց Ալֆորվիլի պատվիրակությանը

**Ապրիլի 19-ին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր, Ալֆորվիլ քաղաքի քաղաքապետ Ռենե Ռուքեին եւ նրա գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին Ալֆորվիլի քաղաքապետի տեղակալ, ՀՅԴ Արեւմտյան Եվրոպայի Կենտրոնական կոմիտեի անդամ Ռիչարդ Անանյանը, Ալֆորվիլ քաղաքի ավագանու անդամներ, հայ համայնքի ներկայացուցիչներ: Պատվիրակության կազմում էր նաեւ ֆրանսահայ բարերար Սարգիս Բեդոյանը, ում հովանավորությամբ Ֆրանսիայի հայկական «Դպրոցասեր» վարժարանի եւ «Սուրբ Մեսրոպ» նախակրթարանի ավարտական դասարանի սաներն ամեն տարի այցելում են Հայաստան:**

ԳՈՒՅԺ

# «Ազգն» աղքատացավ առանց Յարալյանի



Երեկ կյանքից հեռացավ մեր թերթի երգիծանկարիչ, Հայաստանի վաստակավոր նկարիչ, Նկարիչների միության անդամ **Գեորգի Յարալյանը**: 6 տասնյակից ավելի տարիներ նրա երգիծական գրաֆիկայի ճանապարհը խաչվել է շատ թերթերի (առաջին հերթին՝ «Ոզնի» երգիծաթերթում, այնուհետեւ՝ վերջին 14 տարիներին՝ «**Ազգում**»), մեր շատ մեծերի, անհայտ ու հայտնի շատ անունների հետ, ու նա, իհարկե, մերը չէր միայն, այլ լայն առումով՝ արվեստինը, մասնավորաբար՝ երգիծանկարի ժանրինը, քանի որ ժանրի զարգացման հայկական դպրոցի պատմությունը հենց նրա ստեղծագործությանն է կապված: Իսկ մենք՝ «**Ազգ**»-ականներս, կարող ենք ասել միայն, որ պարում էինք փայլող դասականի կողքին, ամեն օր արժանանում նրա երգիծական հայացքին, որ դիպուկ քիքում էր քաղաքական, տնտեսական, կենցաղային իրադարձությունների եւ դրանք կրող անձանց ողջ կոմիզմը, բայց դա անում էր ոչ թե չարությամբ ու ոչնչացնելու մղումով, այլ իրեն հատուկ բարի եւ քննող հայացքով: Հավանաբար այդ կարգի մարդիկ, որոնք քիչ են արտահայտվում, ամեն ինչ ներս են ուղարկում՝ դեպի սիրտը, ու միայն դրանից հետո զգացածն ու տեսածը մատիտի ու վրձնի ծայրով տողում թղթի վրա, դրա համար էլ պետք է խեղճանան՝ սիրտը չդիմացավ նրա 84 երգիծաշատ տարիներին, մարմինը դիմանում էր: Մի կարճ ժամանակով բուժվել էր վերջերս, բայց աշխատանքի էր գալիս ու մեկ օր առաջ էլ աշխատանքի էր՝ նրա վերջին երգիծանկարը տողերիս հեղինակի քաղաքական հրապարակման համատեքստում էր: Երեկ էլ սովորականի պես պետք է գար աշխատանքի, զանգեցին, ասացին՝ Յարալյանը չկա: Նա ծրագրեր էր կազմում, սկսել էր յուղաներկով ու ջրաներկով ինտենսիվ նկարել, ասում էր՝ պահանջ ունեմ նորովի նայելու շուրջս, քննաբար տեսնել բնության պատկերները, մարդկանց, ոչ երգիծաբար, կարծես ուզում էր տեսնել այն, ինչ չէր նկատել երգիծական հայացքով նայելիս: Ընդամենը երկու տարի առաջ էլ նա «**Ազգին**» պատմել էր. «Երազում եմ լավագույն աշխատանքներիս ալբոմը հրատարակել, ժողովրդական նկարչի կոչում ստանալ, Արարատը նկարել ջրաներկով. մի տեղ լինեի, որտեղ Արարատի կոնտուրները հստակ երեւային. ես միշտ ասում եմ՝ Արարատը որ շատերը նկարում են, դա իսկական Արարատը չէ, իր իսկական կոնտուրները չեն: Արարատն իր դեմքն ունի, ես երազում եմ Արարատի իսկական դեմքը նկարել:

Կուզեի՝ օլիգարխները հարկերը վճարեն, որ թոշակառուների հոգսը թեթեւանա. մի քիչ գոնե օլիգարխների եւ բոմժերի միջեւ եղած տարածությունը կրճատվի, մի քանի մմ-ով գոնե մոտենան իրար, որ մեր քաղաքից աղմուկը պակասեր, իմ թոռ Արթուրի ուսման վճարը գոնե նվազեր. չնայած գերազանց սովորում է, բայց շատ մեծ գումար ենք վճարում»:

Եվ ավելացնենք Գեորգի Յարալյանի փիլիսոփայական մտքերից մեկը, որ տարբեր առիթներով սիրում էր կրկնել. «Արվեստը գեղեցիկ սուտ է, բայց օգնում է մարդուն ապրել: Առանց ստի չի լինի, օրինակ՝ մարդ ծանր հիվանդ է, եթե բժիշկն ասի, որ նա մեռնելու է, մարդը տեղոց կմնա, բայց եթե խաբի, թե լավանալու է՝ խոսքով կբուժի: Արվեստն էլ հենց այդ կարգի բուժում է»:

«**Ազգը**» աղքատացավ առանց Յարալյանի:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Հայոց ցեղասպանությունը՝ համաեվրոպական պատմության բաղկացուցիչ

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կազմակերպած երկօրյա «Հայոց ցեղասպանությունը եւ սկանդինավյան արձագանքը» խորագրով միջազգային գիտաժողովի նպատակն է վերականգնել Սկանդինավիա-Հայաստան հարաբերությունների կարեւոր, սակայն մոռացված եւ անտեսված առանցքային դրվագները՝ քննարկելով դրանք ընդհանուր պատմության եւ հիշողության համատեքստում: Գիտաժողովին, որ նվիրված էր Ֆրիտյոֆ Նանսենի ծննդյան 150-ամյակին, կազմակերպվում է Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցի նախօրեին՝ մասնակցությամբ պատմաբան հետազոտողների Հայաստանից, Շվեդիայից, Դանիայից եւ Նորվեգիայից:

«Առաջին աշխարհամարտի տարիներին չեզոք դիրք բռնած գրեթե բոլոր սկանդինավյան պետությունները անմասն չմնացին այդ իրադարձություններից: Բազմաթիվ շվեդներ, նորվեգացիներ, դանիացիներ փորձում էին օգնության ձեռք մեկնել հայ ժողովրդին եւ կիսել մեր ցավը», գիտաժողովի բացման խոսքում ասաց Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն **Հայկ Դեմոյանը**՝ կարեւորելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում ցեղասպանության թեմայի արծարծումը տարբեր ժողովուրդների պատմության մեջ: Դեմոյանը հավելում է, որ բազմաթիվ քաղաքական գործիչներ, գիտնականներ Եվրոպայում ավելի շատ տուրք են տալիս խնդիրը քաղաքականացնելուն, քաղաքական հարթության մեջ ներկայացնելուն՝ մոռանալով, որ այն համաեվրոպական պատմության բաղկացուցիչն է:

«Եվրոպան տեղյակ է Հայոց ցեղասպանությունից, սակայն գործում են երկակի ստանդարտներ: Մարդկությունն ավելի շատ կարեւորում է ոչ թե համամարդկային արժեքները, այլ ռազմավարական դաշնակցությունը: Եթե տնտեսական ու քաղաքական շահերը գերակա են համարվում համամարդկայինի հանդեպ, ապա մարդկությունը դատապարտված է ապագայում նույնպես բախվելու նոր ցեղասպանությունների», ասաց Դեմոյանը:

«Ցեղասպանության միջազգային ճանաչումը ՀՀ արտաքին քաղաքականության կարեւոր բաղադրիչներից է: Ցեղասպանության 96-րդ տարելիցի նախօրեին միջազգային գիտաժողովի անցկացումը Հայաստանում եւս մեկ վկայություն է, որ հայ ժողովուրդը երախտագիտությամբ է հիշում այն բոլոր անձանց ու կազմակերպություններին, որոնք օգնության ձեռք են մեկնել»:

Սա էլ ՀՀ փոխարտգործնախարար **Արման Կիրակոսյանի** կարծիքն է:


ՖՈՏՈԼՈՒՐ

Նրա խոսքերով՝ Ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման հարցում շվեդ, նորվեգացի, դանիացի միսիոներների հուշերը կարեւոր դեր ունեն, քանի որ ներկայացնում են չեզոք եւ օբյեկտիվ պատմությունը: «Թեեւ Ցեղասպանությունը տեղի է ունեցել շուրջ մեկ դար առաջ, սակայն դրա հետեւանքները շարունակում են մարդկությանը հուզել մինչ այսօր»:

Շվեդ պատմաբան, Ուպսալայի համալսարանի պրոֆեսոր **Յորան Գյուների** գնահատմամբ՝ Թուրքիան, բազմաթիվ այլ պետությունների նման, Հայոց ցեղասպանության հարցը փորձում է շրջափել միայն պատմաբանների շրջանակներում: «Թուրքիայի փորձը՝ քննարկելու Հայոց ցեղասպանության խնդիրը միայն պատմաբանների հետ, հասկանալի է: Դրանով իրենք փորձում են մաքուր պահել իրենց դեմքը համաշխարհային հանրության առջեւ: Սակայն եղեռնագործությունն այն դեպքը չէ, որի հետ կարելի է հաշվի չնստել ու չդատապարտվել: Նման հանցագործությունները նախ պետք է դատապարտվեն, հետո միայն պատմաբաններն ուսումնասիրեն»:

Հարցին՝ Եվրոպական միությունը կկարողանա՞ հանդուրժել նման ծանր մեղադրանքով պետության անդամակցությունը, Գյուները հավաստիացնում է, որ այդ քայլը դեմ կգնա Եվրոմիության ընդունած նորմերին:

«Այդ հարցում Եվրոպան միասնական չէ: Մի շարք պետություններում բացառում են Թուրքիայի մուտքը ԵՄ, իսկ մյուսները՝ խրախուսում: Հարցն այստեղ քաղաքական է, եւ շատ պետություններ, ովքեր ունեն Թուրքիայի հետ խոր տնտեսական կապեր, կարող են համամարդկային հանցագործության մեջ մեղադրանքի առջեւ աչք փակել»:

Շվեդ պատմաբան **Օքե Դաունը** պատմում է, որ Շվեդիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը սկսվել է դեռեւս ցեղասպանության տարիներին»: Պատմաբանն ընդգծում է, որ 1917թ. հազարավոր շվեդներ դուրս եկան Ստոկհոլմի փողոցներ՝ պահանջելով դադարեցնել ու դատապարտել հայերի զանգվածային ջարդերը:

«Այդ բողոքի ցույցերը նախաձեռնել էր խորհրդարանի ձախակողմյանների առաջնորդ Յանա Բրանդը, որը հետագայում դարձավ Շվեդիայի վարչապետ: 1950-60-ականներին կրկին հարցը դարձավ խորհրդարանական քննարկումների առարկա, իսկ 2010-ին Շվեդիայի խորհրդարանում՝ Ռիքսդագում Հայոց ցեղասպանության ճանաչումն իր ավարտական գործընթացին հասավ: Թուրքիայի իրագործած ոճիրը պաշտոնապես ճանաչվեց», ասում է Դաունը՝ հավելելով, որ եվրոպական պետությունները պետք է տարանջատեն քաղաքականությունն իրական պատմական ճշմարտությունից ու իրենց արտաքին քաղաքական ուղին գծեն այդ պատմական փաստերի հիման վրա:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի գնահատմամբ՝ գիտաժողովի նպատակն է Հայոց ցեղասպանության մասին հուշեր արթնացնել ոչ միայն համընդհանուր հայտարարություններով, այլեւ ընտրել այն տարածաշրջանները, որոնք ականատես են եղել եղեռնագործությանն ու պահպանել այդ մասին վկայող բազմաթիվ հիշողություններ ու փաստեր:

Ապրիլի 23-ին «Հայոց ցեղասպանությունը եւ սկանդինավյան արձագանքը» խորագրով լուսանկարների ցուցահանդես կբացվի ցեղասպանության թանգարան-ինստիտուտում: Այսօր գիտաժողովի ավարտին մասնակիցները կայցելեն Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրի հուշապատում կամփոփվի միսիոներներ **Ալմա Յոհանսոնի** եւ **Մարիա Յակոբսենի** գերեզմաններից բերված հողը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Նախկին նախագահի ընտանիքն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի

*Վճիռը՝ մայիսի 5-ին*

**Վերաքննիչ դատարանում երեկ ավարտվեց Քոչարյանների հայցն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի գործով դատաքննությունը:**

**Հիշեցնենք, որ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի ընտանիքը 6 մլն դրամի փոխհատուցում էր պահանջում օրաթերթից՝ տպագրված երեք հոդվածների համար: Դրանցից մեկում թերթը գրել էր, որ նախկին առաջին տիկին Բելլա Քոչարյանը բժշկության բիզնեսով է զբաղվում: Հաջորդ երկու հոդվածները վերաբերում էին Քոչարյանի ավագ որդուն՝ Սեդրակ Քոչարյանին: Ըստ թերթում հրապարակված հոդվածների՝ Սեդրակ Քոչարյանը բիզնեսմեններից մեկից ձեռնարկություն էր խլել: Բացի դրանից՝ նա ադամանդի հանքավայր ունի Հնդկաստանում:**

**Քոչարյանների ընտանիքը հայտարարել էր, որ օրաթերթում հրապարակված հոդվածները զրպարտություն են, որոնք վիրավորում եւ արատավորում են իրենց ընտանիքի պատիվն ու արժանապատվությունը:**

**Երեկվա դատական նիստին «Ժամանակ» օրաթերթի ներկայացուցիչ Նիկոլայ Բաղդասարյանը հայտարարեց, որ օրաթերթը պատրաստ է հերքում տպագրել, եթե հայցվորները հստակ նշեն, թե հոդվածում տպագրված որ փաստերը չեն համապատասխանում իրականությանը:**

**Քոչարյանների ընտանիքի փաստաբան Սարգիս Գրիգորյանն էլ ասաց, որ «Ժամանակ» օրաթերթի հետ հաշտվել չեն ցանկանում:**

**Գրիգորյանն ասաց, որ իրենք փորձել են հոդվածի տպագրումից հետո բանակցել, համագործակցության եզր գտնել, եթե թերթում տեղ գտած ոչ ճիշտ տեղեկատվությունը հերքվի, սակայն պատասխանող կողմը անբարեխիղճ քայլեր է կատարում. «Հետեւաբար հաշտության եզրեր Քոչարյանները չեն տեսնում»:**

**Վճիռը կհրապարակվի մայիսի 5-ին:**

Հ. Հ.

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «Մեր ծրագրերը պետք է համակարգված լինեն»

*Արա Աբրահամյանը կարեւորում է երկրի նախագահից ստացած աջակցությունը ծրագրերի իրագործման գործում*

*1-ին էջից*

Մեր կողմից առաջարկվելու ենք բիզնես-ծրագրեր՝ 100 հազարից մինչեւ տասնյակ միլիոն դոլարի արժեք ունեցող: Նախագահի հանձնարարությամբ համապատասխան գերատեսչությունները համատեղ կստեղծեն կազմկոմիտե, կկազմվեն բիզնես-ծրագրեր, որոնք կառաջարկվեն գործարար շրջանակներին: Օրինակ՝ ես ցանկանում են ներդրում կատարել Հայաստանում, բայց չգիտեմ, թե որտեղ եւ ինչպես: Կարեւորն այստեղ այն է, որ այդ ծրագրերը ներկայացվելու են ամբողջական փաթեթով՝ համապատասխան թույլտվություններով, եւ որ մենք Հայաստանի կառավարության երաշխիքներն ենք ունենալու, որ այդ բիզնես-ծրագրերն իսկապես բարձրակարգ են, որ ինքն աջակցելու է եւ ձգտելու է գտնել ապահովագրական մեխանիզմներ այդ ծրագրերի համար: Մենք գտնում ենք, որ առաջնահերթ է մարզերում եւ հատկապես սահմանամերձ գյուղերում իրականացնել զարգացման ծրագրեր:

**- Քանի՞ այդպիսի բիզնես-ծրագրեր կան:**

- Ունենք մոտ յոթ տասնյակ այդպիսի ծրագրեր: Բացի բիզնես-ծրագրերից, շարունակելու ենք մեր կողմից արդեն իրականացվող ծրագրերը:

ՀՀ սփյուռքի նախարարության հետ շարունակելու ենք «Հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար» համահայկական ամենամյա մրցույթի շրջանակներում 2011 թ. նախատեսված երկու մրցանակաբաշխություն՝ «Մայրենիի լավագույն ուսուցիչ» եւ «Լավագույն երիտասարդական կազմակերպություն» անվանակարգերով:

Մրցույթների նպատակն է խրախուսել սփյուռքում հայ ազգային ինքնության, մայրենի լեզվի պահպանման, զարգացման եւ տարածման գործում նշանակալի ավանդ ունեցող ուսուցիչներին, սփյուռքյան երիտասարդական կազմակերպություններին՝ կարեւորելով նրանց դերակատարությունը համահայկական ու միջազգային խնդիրների լուծման գործում: Ի դեպ նշեմ, որ այս տարվա ծրագրերը կիրագործվեն Հայաստանի անկախության 20-ամյա հոբելյանի շրջանակներում:

Կրթության եւ գիտության նախարարության հետ շարունակելու ենք դպրոցների համակարգչայնացման, ռուսաց լեզվի փառատոնի, տարբեր մրցույթների ծրագրերը:

**- Պրն Աբրահամյան, Ձեր այս այցը համընկավ Ձեր ծննդյան օրվա հետ, ինչի առթիվ շնորհավորում ենք Ձեզ:**

- Շնորհակալություն: Այս կապակցությամբ մի հետաքրքիր միտք էլ արտահայտեց նախագահը, ասելով, որ լավ կլինի յուրաքանչյուր հայ իր ծննդյան օրը գա Հայաստանում նշելու:

Ես կուզենայի հատուկ շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին, որի հետ մոտ 2 ժամ քննարկեցինք այս հարցերը: Կցանկանայի ասել, որ նա շատ մեծ գործ է արել մեր երկրի անվտանգության ապահովման համար: Չնայած մեր ազգային խնդիրները դեռ լուծման ճանապարհին են՝ լինեն Ցեղասպանության ճանաչման, թե Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման հարցերը, բայց նա այս ուղղությամբ ճիշտ մոտեցում ունի: Նա գտել է ճիշտ նպատակակետը եւ գնում է դեպի այն: Դա արդեն իսկ հաղթանակ է, անկախ նրանից, թե որքան ժամանակ է պետք դրան հասնելու համար: Երկար տարիներ համագործակցելով Սերժ Սարգսյանի հետ, նոր որակ, մասշտաբային մոտեցում եմ բացահայտում այդ մարդու մեջ յուրաքանչյուր հանդիպման ժամանակ: Նա լավատեղյակ էր բոլոր հարցերից, մանրամասնությամբ ներկայացնում էր իր ծրագրերը, ծանոթանում մեր ծրագրերին, հետաքրքրվում, թե ո՞ր քայլն ինչպե՞ս ենք անելու: Իհարկե, երկրում կուտակված շատ խնդիրներ կան, հատկապես սոցիալ-տնտեսական ոլորտում, որոնք պահանջում են անհապաղ լուծումներ: Կարեւորն այն է, որ նախագահը վճռական է տրամադրված հետեւողականորեն հասնել այդ հիմնահարցերի հանգուցալուծմանը: Կոչ եմ անում բոլորին, հատկապես սփյուռքահայությանը՝ մտավորականներին, գործարարներին, օգնել նախագահին երկրի զարգացման ծրագրերը իրականացնելու հարցում, որովհետեւ օգնելով նախագահին՝ օգնում ենք երկրին, մեր ժողովրդին:

**- Դուք հանդիպեցիք նաեւ Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանի հետ: Ի՞նչ հարցեր քննարկեցիք նրա հետ:**

- Ժամանակակից մտածելակերպով, բարձր մակարդակ ունեցող կառավարիչ, բիզնեսում կայացած մարդ է քաղաքապետ դարձել, որ ոչնչով չի զիջում իր նախորդներին:

Մենք իրազեկեցինք նրան, որ մեր երիտասարդական կազմակերպության անդամները դեռեւս անցյալ տարվա հունվարին հանդես են եկել «Անմեռ նահատակի հիշատակին» շարժում սկսելու նախաձեռնությամբ, որով նախատեսվում է մինչեւ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը Հայաստանի տարածքում երիտասարդության, ինչո՞ւ չէ՝ հասարակության ուժերով տնկել 1,5 միլիոն ծառ, որը կդառնա ցեղասպանության յուրաքանչյուր զոհի բարոյական հոգեհանգստի արարողություն:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ քաղաքապետարանը տրամադրի համապատասխան տարածք՝ ծառատունկը կազմակերպելու եւ քաղաքային նոր այգի հիմնադրելու համար:

Հաջորդը՝ դպրոց ենք ուզում կառուցել, որը գուցե դառնա ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից, համապատասխանելով միջազգային չափորոշիչներին: Դա նշանակում է, որ այդ դպրոցի ավարտական վկայականը համարժեք կլինի Եվրոպայի եւ Ամերիկայի լավագույն դպրոցների վկայականին: Այն գործելու է նախադպրոցական տարիքից՝ 5 տարեկանից մինչեւ 12 տարվա ավարտական դպրոցը:

Չորրորդը՝ համատեղ «Մաքուր Երեւան» ծրագիրն է, համատեղ խմբեր ստեղծենք եւ մեխանիզմ, որպեսզի այն իրագործվի ամեն օր եւ որ ամեն մի երեւանցի սիրով մասնակցի քաղաքը մաքուր պահելու, Երեւանն օրինակելի մայրաքաղաքների շարքում տեսնելու համար:

**- Ի՞նչ կցանկանայիք ավելացնել վերջում:**

- Կոչ եմ անում բոլորին համատեղ ուժերով նպաստել մեր հայրենիքի զարգացմանը: Մենք էլ մեր կողմից խոստանում ենք, որ ամեն ինչ կանենք մեր ծրագրերի իրագործման համար:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Ֆուկուշիմա-1» ատոմակայանում տեղի ունեցած վթարի կրկնություն Մեծամորում բացառվում է

## Հայկական ատոմակայանի անվտանգության մակարդակը հուսալի է



Ճապոնական «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի վթարից հետո Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն մշակել է նախագիծ, որով առաջարկվում է ատոմակայանների անվտանգության խոր վերլուծության համար «սթրես թեստ» անցկացնել: Հայաստանի Մեծամորի ատոմակայանն էլ է պատրաստվում կիրառել այդ մեթոդը` ավելի խորացված եղանակով ստուգելու ատոմակայանի անվտանգության մակարդակը: Վերոնշյալ մեթոդը ներառում է արտաքին գործոնների ազդեցությունը` ցունամիներ, երկրաշարժեր, տորնադոներ, փոթորիկներ եւ ջրհեղեղներ:

Հայկական ատոմակայանի համար իրական սպառնալիքներ են համարվում երկրաշարժն ու փոթորիկը: Ատոմակայանի անվտանգությանն առնչվող վերլուծության համար կպահանջվի երեք ամիս. արդյունքները կներկայացվեն Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե, որն էլ իր հերթին կանցկացնի անկախ վերլուծություն: Արդյունքների ամփոփումից հետո մասնագետները կնշեն այն ուղիները, որոնք ատոմակայանի անվտանգությունը կբերեն ավելի բարձր մակարդակի:

Մինչ այդ, մայիսի 15-ից հունիսի 1-ը ատոմակայանի շահագործման անվտանգության վիճակի վերաբերյալ դիտարկում կանցկացնի ՄԱԳԱՏԷ-ի փորձագիտական խումբը:

ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի նախագահ **Աշոտ Մարտիրոսյանի** գնահատմամբ` Մեծամորի ատոմակայանի անվտանգության մակարդակը հուսալի է եւ լիովին բավարարում է նման ատոմակայանների համար ընդունելի ռիսկի աստիճանը:

Նա բացառում է Ճապոնիայի «Ֆուկուշիմա-1» ատոմակայանում տեղի ունեցած վթարի կրկնություն Մեծամորում: «Ի տարբերություն միակոնտուր «Ֆուկուշիմա-1»-ի, Մեծամորի երկկոնտուր ատոմակայանի ռադիոակտիվ գազը արտանետվում է շոգեբլոկից, որտեղ հավաքվում է մաքուր ջուր: «Ֆուկուշիմա-1»-ը շահագործման է հանձնվել 1970-ականներին. այն եռացող տիպի է, որի կոնստրուկցիան չի բավարարում ներկայիս պահանջներին», «Արմաս»-ում երեկ ասաց Աշոտ Մարտիրոսյանը: Մասնագետը հիշեցրեց 1982թ. ատոմակայանում տեղի ունեցած հրդեհը, երբ ատոմակայանը զրկվել էր արտաքին եւ ներքին էլեկտրասնուցման աղբյուրներից:

«Մի քանի ժամվա ընթացքում հնարավոր եղավ ատոմակայանի անվտանգության կարեւոր համակարգերն ապահովել էլեկտրականությամբ եւ անհրաժեշտ հովացման ջրով»: Մարտիրոսյանի գնահատմամբ` 1982թ. հրդեհը ատոմակայանի անձնակազմի որակավորման ամենամեծ քննությունը եղավ. անձնակազմը կարողացավ ծանր իրավիճակում արագ կողմնորոշվել: Նրա հավաստիացմամբ` այժմ ատոմակայանի անձնակազմն ավելի պատրաստված է, որակավորումն ավելի բարձր:

Գերակա խնդիրներից Մարտիրոսյանն առանձնացրեց Մեծամորի ատոմակայանի սեյսմիկ անվտանգությունը: Հարցը հայ մասնագետների ուշադրության կենտրոնում է:

Մեծամորի ատոմակայանը նախագծվել է 7 եւ 8 բալ սեյսմիկ գոտու շինարարական չափանիշներով: Դա ենթադրում է, որ եթե գրանցվի 7-բալանոց երկրաշարժ, ատոմակայանը չի վնասվի եւ կշարունակի աշխատել համաձայն նախագծային ռեժիմի: 6-բալանոց երկրաշարժի դեպքում սեյսմիկ պաշտպանության ավտոմատ համակարգը կանջատի ռեակտորը: 8-բալանոց երկրաշարժի պարագայում հնարավոր են որոշ ոչ կարեւոր օբյեկտների փլուզումներ եւ ճաքեր, որոնք չեն կարող ազդել ատոմակայանի անվտանգության վրա:

Մարտիրոսյանի հավաստիացմամբ` «Ֆուկուշիմա-1» ատոմակայանում տեղի ունեցած վթարը չի ազդել Հայաստանի էներգետիկ քաղաքականության վրա: «Ծրագրով նշված է, որ կառուցվելու է ԱԷԿ: Այս հարցում որեւէ փոփոխություն չկա: Սակայն ներկա դրությամբ նոր ատոմակայանի հետ կապված բոլոր խնդիրները սառեցված են»: Հայ մասնագետները սպասում են «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի վթարի վերլուծության վերջնական եզրակացությանը, ինչից հետո նոր ատոմակայանի նախագծային պահանջներն ավելի կխստացվեն: Ատոմակայանի անվտանգության ապահովման նպատակով 1993-ից ծախսվել է 120 մլն դոլար: Մինչեւ 2016 թ. նախատեսվում է ծախսել եւս 20 մլն դոլար:

Արձագանքելով վերջին շրջանում Ադրբեջանի, Թուրքիայի, Վրաստանի քաղաքական գործիչների հայտարարություններին` Մեծամորի ատոմակայանը փակելու վերաբերյալ, Մարտիրոսյանն ասաց, որ չկա միջազգային որեւէ պայմանագիր, որը իրավունք կտա որեւէ երկրի այլ երկրի ատոմակայան փակելու պահանջ դնելու: **ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Orange-ը իջեցնում է ցանցից դուրս զանգերի սակագինը




**Երեկ Orange-ը հայտարարեց «Խոսենք» կանխավճարային ծառայության սակագնային պլաններում մի շարք փոփոխությունների մասին:**

**Orange-ի «Խոսենք» կանխավճարային ծառայության բաժանորդներն այսուհետեւ Հայաստանի եւ Արցախի այլ օպերատորների բաժանորդներին կզանգահարեն ավելի ցածր սակագներով: «Իմ ընկերները», «Իմ ժամանակը» եւ «Իմ համարները» եւ «Իմ երկիրը» սակագնային պլաններում այսուհետեւ ցանցից դուրս զանգերի եւ տեսազանգերի` ներառյալ Արցախի համարներին կատարված զանգերի մեկ րոպեի արժեքը նախկին 40 դրամի փոխարեն կլինի 35 դրամ:**

**«Ստարտ» սակագնային պլանը վերանվանվել է «Իմ երկիրը», եւ վերջինիս բաժանորդները, ինչպես նախկինում, Երեւանից, Գյումրիից եւ Վանաձորից դուրս գտնվելիս կարող են Orange-ի բոլոր բաժանորդներին զանգահարել 5 դրամ/րոպե սակագնով:**

**Փոփոխություններ են կատարվել նաեւ «Իմ համարները» սակագնային պլանում: Այսուհետեւ այս սակագնային պլանի բաժանորդները կարող են ընտրել 5 սիրելի հեռախոսահամար. 4-ը կարող են լինել Orange հեռախոսահամարներ, որոնց կարելի է զանգահարել 5 դրամ/րոպե սակագնով, իսկ մեկը կարող է լինել Հայաստանի կամ Արցախի որեւէ այլ օպերատորի շարժական կամ ֆիքսված ցանցի հեռախոսահամար, որին կատարված զանգերը կարժենան 25 դրամ/րոպե:**

**«Մեր սակագնային պլանների նպատակն է ունենալ անհատականացված առաջարկներ եւ այս բոլոր փոփոխությունները մեկ նպատակ ունեն. ավելի հարմարեցնել մեր սակագնային պլաններն առանձին բաժանորդների պահանջներին», ասաց Orange-ի մարկետինգի տնօրեն Արամ Մկրտչյանը:**



# Մարտին տնտեսական ակտիվության աճ չարձանագրվեց

**Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2011-ի մարտ ամսվա սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) նախորդ տարվա մարտի համեմատ մնացել է անփոփոխ, այսինքն աճ չի արձանագրել:**

**Հիշեցնենք, որ այս տարվանից Ազգային վիճակագրական ծառայությունն անցնում է մակրոտնտեսական ցուցանիշների հավաքման, հրապարակման եւ ամփոփման նոր մեթոդի: Մասնավորապես դադարեցվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ամսական հաշվարկումը: Փոխարենը, որպես տնտեսության վիճակը գնահատող ամսական ցուցանիշ ներկայացվելու է տնտեսական ակտիվության ցուցանիշը, իսկ ՀՆԱ ցուցանիշները հրապարակվելու են եռամսյակային եւ տարեկան կտրվածքով: Նոր մեթոդին անցումը վիճծառայությունը կատարել է Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի եւ Եվրոմիության փորձագետների խորհրդատվության հիման վրա:**

**Այսպիսով, տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա մարտի նկատմամբ մնացել է անփոփոխ, իսկ այս տարվա փետրվարի նկատմամբ աճել է 17,6 տոկոսով: Նախորդ տարվա մարտի համեմատ աճ են արձանագրել արդյունաբերությունը, առեւտուրը եւ էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մասնավորապես արդյունաբերությունը այս տարվա մարտին 2010-ի մարտի նկատմամբ աճել է 5,9 տոկոսով, իսկ այս տարվա փետրվարի նկատմամբ` 12,7 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 7,8 տոկոսով, իսկ փետրվարի նկատմամբ` 2,5 տոկոսով: Մանրածախ առեւտրում արձանագրվել է 5 տոկոս աճ անցյալ տարվա մարտի համեմատ, իսկ այս տարվա փետրվարի նկատմամբ` 16,6 տոկոս աճ:**

**Շինարարությունը մարտին ունեցել է 5,2 տոկոս անկում, իսկ փետրվարի նկատմամբ` 22,2 տոկոս աճ: Ծառայությունների ոլորտում անցյալ տարվա մարտի նկատմամբ անկումը կազմել է 7,4 տոկոս, իսկ այս տարվա փետրվարի նկատմամբ աճը` 9,5 տոկոս: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը մարտին անկում է արձանագրել 2 տոկոսով, իսկ փետրվարի նկատմամբ աճել` 21,8 տոկոսով:**

**Արտաքին առեւտրաշրջանառությունը 2011-ի մարտին 2010-ի մարտի նկատմամբ ավելացել է 14,1 տոկոսով եւ կազմել 430 մլն դոլար: Արտահանումը կազմել է 92 մլն դոլար, արձանագրելով 21,8 տոկոս աճ, իսկ մարտին` փետրվարի նկատմամբ, ընդամենը 2,5 տոկոս աճ: Ներմուծումը կազմել է 338 մլն դոլար, նախորդ տարվա մարտի համեմատ աճելով 12,2 տոկոսով, իսկ այս տարվա փետրվարի համեմատ` 23,2 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը խորացել է, կազմելով 246 մլն դոլար: Հիշեցնենք, որ փետրվարին արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը փոքր-ինչ նվազել էր, հունվարի 189 մլն դոլարից հասցնելով 184 մլն դոլարի, սակայն մարտին կրկին կտրուկ մեծացավ:**

**Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում մարտին կազմել է գրեթե 112 հազար դրամ, մասնավոր հատվածում` 140 հազար դրամ, պետականում` 88 հազար դրամ:**

**Եթե համադրենք մարտի ցուցանիշները նախորդ տարվա մարտի հետ, ապա զրոյական տնտեսական աճը բավականին մտահոգիչ է: Միակ դրականն այստեղ արդյունաբերության շարունակվող կայուն աճն է:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Ենթակառուցվածքների ծրագրերում մասնակցելու առաջարկ ֆրանսիացիներին

Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարությունից, նախարար Մանուկ Վարդանյանը երեկ ընդունել է Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոյին: Նախարարը ներկայացրել է տրանսպորտի եւ ենթակառուցվածքների ոլորտում իրականացվելիք ներդրումային ծրագրերը, այդ թվում` «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու, «Հյուսիս-հարավ» եւ Վանաձոր-Ֆիոլետովո երկաթգծերի կառուցման ծրագրերի ընթացքը եւ առաջարկել, որպեսզի այդ ծրագրերի իրականացմանը մասնակցեն նաեւ ֆրանսիական ընկերությունները: Մանուկ Վարդանյանն անդրադարձել է նաեւ Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից Հայաստանին հատկացված ուղեծրային կետերի համատեղ շահագործման հնարավորություններին: Դեսպան Անրի Ռենոն իր պատրաստակամությունն է հայտնել հնարավորինս աջակցել վերոնշյալ ծրագրերի իրականացմանը:

**Ա. Մ.**

# «Հրազդան» մարզային մասնաճյուղը տեղափոխվել է նոր երկհարկանի շենք

Հաճախորդներին առավելագույն հարմարավետությամբ սպասարկելու համար «Յունիբանկ»-ի «Հրազդան» մարզային մասնաճյուղը տեղափոխվել է նոր երկհարկանի շենք, որը գտնվում է Հրազդան քաղաքի գլխավոր եւ բանուկ խաչմերուկներից մեկում: Մասնաճյուղի նոր հասցեն է` ք.Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 4-րդ փողոց, համար 8: Փոխվել է նաեւ մասնաճյուղի հեռախոսահամարը` /0223/ 31376:

Մասնաճյուղի տեղափոխումը նոր շենք իրականացվել է «Յունիբանկ»-ի մանրածախ բիզնեսի զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակներում, համաձայն որի «Յունիբանկ»-ն ընդլայնում եւ բարձրացնում է մասնաճյուղային ցանցի արդյունավետության մակարդակը` նպատակ ունենալով ապահովելու մեծ թվով հաճախորդների օպերատիվ սպասարկումը, բանկային ծառայությունների ամբողջական փաթեթի տրամադրումը եւ կորպորատիվ միասնական չափանիշների ներդրումը:

Հրազդան մասնաճյուղն առաջարկում է բանկային ծառայություններ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար, այդ թվում` ավանդների ընդունում, վարկավորում, բանկային քարտերի տրամադրում եւ սպասարկում, Յունիստրիմ դրամական փոխանցումների իրականացում, վճարահաշվարկային ծառայությունների մատուցում, կոմունալ վճարումների ընդունում:

Ներկայումս Բանկն ունի 34 մասնաճյուղ եւ ներկայացուցչություն Մոսկվայում: Բանկի բոլոր մասնաճյուղերը միացված են տվյալների միասնական բազային եւ աշխատում են online աշխատակարգով: Այս տարի «Յունիբանկ»-ը նախատեսում է բացել եւս 8 նոր մասնաճյուղ:

# Հայկական լեգեոն՝ հաղթական բանակ

Այս տարի լրանում է 95-րդ տարեդարձը Հայկական լեգեոնի կազմավորման, որն անցյալ դարի ազգային ազատագրական պայքարի մեջ իր նմանն ու թափը չունեցող երեւույթ եղավ՝ որպես հավաքական համոզում ու հասկացություն:

Փաստորեն Հայկական լեգեոնը հայկական պետականության կորստից հետո (քանի դար անց) առաջին հայկական զինվորական միավորումը եղավ, որը կազմակերպվեց որպես կանոնավոր բանակ, պետական սկզբունքների հիման վրա: Իհարկե ենթակա էր ֆրանսիական հրամանատարությանը եւ կռվում էր ֆրանսիական բանակի կազմում, բայց պատերազմի ժամանակ անգամ ուժեղ պետությունների բանակներն են հաճախ ենթարկվում օտար հրամանատարներին, առանց կորցնելու իրենց ազգային դիմագիծն ու էությունը, ռազմավարական նպատակներն ու հայրենյաց շահը:

Այո, ամենեւին խնդիր չէր, որ Հայկական լեգեոնը գտնվում էր ոչ թե հայկական, այլ ֆրանսիական կառավարության հրամանատարության տակ, բայց կարող էր օգտագործվել ըստ պայմանագրի, որոշակի ճակատում, ավելի ստույգ՝ լոկ թուրքականում:

Ազգային արժանապատվության գրավականը օրինավոր եւ օրինապահ բանակ ունենալ եւ հայրենիքի զինվոր դաստիարակելն է: Հայկական լեգեոնի կազմավորմամբ հայ ժողովուրդը, որը Եղեռնի արհավիրքից շփոթված էր, վերագտավ իր արժանապատվությունը որպես ազգ ու դարձավ գործոն միջազգային հանրությունում եւ փոխհարաբերություններում:

Մինչեւ Հայկական լեգեոնի ստեղծվելը հայությունը տվել եւ ուներ բազմաթիվ հերոսախմբեր: Սակայն Հայկական լեգեոնը ոչ թե հերոսախումբ էր, այլ բանակ բառիս իսկական իմաստով, որտեղ գործում էր կարգուկանոնը, որտեղ կրթվում էր զինվորը մտքով ու մարմնով, որտեղ հայի վրեժը, վերածվելով սխրանքի տենչող մի հավաքական ուժի, մարմնավորում էր ազգն ու հայրենիքը հավատով ու հույսով:

1916թ. հոկտեմբերին հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան Լոնդոնի ֆրանսիական դեսպանատանը հանդիպում է Ժորժ Պիկոյի եւ Մարկ Սայքսի հետ, որտեղ քննարկվում է հայ կամավորների ընդգրկումը որեւէ ազգային զինվորական միավորման մեջ՝ բացառապես հայկական հողամասերը թուրքական տիրապետությունից ազատելու նպատակով:

Պիկոն եւ Սայքսը համարում են այդ գաղափարը միանգամայն ընդունելի ու բնական, եւ եռյակը համաձայնության է գալիս հետեւյալում.

Կամավորները ո՛չ Ֆրանսիայում, ո՛չ էլ Եվրոպայում չեն մասնակցի պատերազմին, այլ կօգտագործվեն բացառապես ասիական Թուրքիայում: Նրանք կկռվեն իրենց դարավոր թշնամու դեմ՝ հայրենի հողերն ազատագրելու համար:

Ֆրանսիան պարտավորվում է դաշնակիցների հաղթանակից հետո ինքնավարություն տալ Կիլիկիային իր հովանավորության տակ:

1916թ. նոյեմբերին գնդապետ Ռոմիյոն գործուղվում է Եգիպտոս եւ Եգիպտոսի հայ ազգային միության հետ համաձայնության է գալիս Արեւելյան լեգեոն կազմավորելու շուրջը:

Արեւելյան լեգեոնը նպատակ է ունենալու աջակցել հայերին, ազատագրելու Կիլիկիան եւ այդպիսով հնարավորություն ստեղծելու ազգային ձգտումների իրականացման համար:


Մի խումբ չնքուշցի լեգեոնականներ

Հայ լեգեոնականները կռվելու են միայն թուրքերի դեմ եւ միմիայն Կիլիկիայում:

Հայկական լեգեոնը կկազմի ապագա հայկական բանակի կորիզը Կիլիկիայում:

Կիլիկիան ընկած է Միջերկրական ծովի հյուսիսարեւելյան ափերին՝ զբաղեցնելով մի տարածություն, որի սահմաններն են հյուսիսից եւ արեւմուտքից՝ Տավրոսի լեռները, հարավից՝ Միջերկրական ծովը, իսկ արեւելքից՝ Ամանոսի լեռնաշղթան:

Կիլիկիան սովորաբար բաժանում են երկու մասի՝ Լեռնային Կիլիկիա, որն ընդգրկում է հյուսիսային-հյուսիսարեւելյան շրջանները եւ Դաշտային Կիլիկիա, որի մեջ մտնում են հարավային շրջանները:

1916 թվականի նոյեմբերի 16-ին ֆրանսիական կառավարության հրահանգով ստեղծվում է Արեւելյան լեգեոնը:

Այս լուրը մեծ ոգեւորություն ու եռանդ է առաջացնում սփյուռքի հայության մեջ՝ ի զարմանս օտարների: Կամավորների հավաքագրումը դառնում է համաժողովրդական գործ: Հայի համար նորից բացվել էին դռները հուսո:

Լեգեոնի կազմավորումը հայ քաղաքական կուսակցությունների համար այն եզակի դեպքերից էր, երբ նրանք այդ գաղափարի շուրջը եղան միակարծիք ու համերաշխ, իրենց կարելին, անգամ անկարելին արեցին հաջողությամբ ավարտին հասցնելու համար, եւ ոչ ոք կուրծք չծեծեց իր առաջատարությունը ցուցանելու, հակառակ այն փաստին, որ լեգեոնականների մեծ մասը ռամկավար եւ վերակազմյալ հնչակյաններ էին:

Հայությունը՝ մեկ հոգի, մեկ մարմին էր, պատրաստ սխրանքի՝ հանուն նոր կյանքի եւ նոր ոգու:

Կարճ ժամկետում ձեւավորվեց Արեւելյան լեգեոնի 1-ին վաշտը, որի առաջին 600 կամավոր զինվորները եղան Պորտ-Սաիդում ժամանակավոր ապաստան գտած մուսալեռցիները, նրանց թվում էր Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը՝ Եսայի Յաղուբյանը: Այնուհետեւ եգիպտահայերը՝ 300 հոգի եւ թուրքական բանակում ծառայած հայ գերիները՝ 236 հոգի:

2-րդ վաշտը ձեւավորեցին 1200 կամավորական ամերիկահայերը: Կամավորների առաջին խումբը Ամերիկայից մեկնեց 1917թ. հունիսի 9-ին, իսկ վերջինը՝ նոյեմբերի 3-ին:

Արեւելյան լեգեոնի կազմավորման օրից մինչեւ 1918թ. մայիսը, լեգեոնը տեղաբաշխված էր Կիպրոս կղզու Մոնարկա սարահարթի մարզադաշտում:

1918 թվականի կեսերին Արեւելյան լեգեոնը իր շարքում հաշվում էր արդեն 5500 զինվոր, որից միայն 400 հոգի սիրիացիներ, մնացածը 5100-ը հայեր էին:

Ըստ ֆրանսիական հրամանատարության սպա Բրնուա դ'Ազիի հրապարակած տվյալների, լեգեոնի զինվորների ընդհանուր թիվը 5662 էր:

1918թ. մայիսին Արեւելյան լեգեոնը փոխադրվում է Իսմաիլիա, ուր մնում է մինչեւ հուլիսի 12-ը, այնուհետեւ՝ Մեջդել, որտեղ նրան միանում են 250 սիրիացի կամավորներ՝ Պաղեստինի ռազմաճակատի ընդհանուր հրամանատար Ալենբիի կողմից նախապատրաստվող հարձակմանը մասնակցելու համար:

Խոշորամասշտաբ հարձակում տեղի ունեցավ 1918 թվականի սեպտեմբերի 19-ին, Պաղեստինի ամբողջ ճակատի երկայնքով, որը ձգվում էր Մեռյալ ծովից մինչեւ Միջերկրականի արեւելյան ափերը: Թերեւս ուրիշ մի դիրք հարձակման ենթակա այնքան անառիկ չէր, որքան Արարայի բարձունքի արեւմտյան լանջի ուղղությամբ հայկական լեգեոնին բաժին ընկած դիրքը: Ասում են, որ այդ դիրքի վրա անգլիացիների (3000 զինվորներով) հարձակումները մեծ կորուստներով հետ են մղվել:

Հայկական լեգեոնի 600 զինվորների դեմ կանգնած էր 1600 հոգուց բաղկացած թշնամի բանակ, որից 600-ը գերմանացի, իսկ 1000-ը թուրքեր էին, տեղաբաշխված էին երեք բարձր բլուրներին, որոնցով էլ անցնում էին թշնամու առաջին, երկրորդ եւ երրորդ պաշտպանական գծերը:

Թշնամու այս գերազանց առավելության դեմ հայ զինվորը կանգնեց իր ցեղի անմեռ արյունից եւ դարավոր տառապանքից ժայթքած վրեժով ու ատելության ողջ ուժով, ինչն էլ մոռանալ էր տվել վախի ու վտանգի ամեն զգացում:

Ու հայ զինվորը խոյացավ առաջ, արհամարհած մահը, եւ ...հաղթանակ, նվաճված էր Արարան, ճեղքված էր ռազմաճակատի գիծը: Թուրքը փախչում էր: Հայերը տվեցին 23 զոհ եւ 68 վիրավոր:

Արարան խորհրդանիշն է հայության կորովի, քաջության, անձնվիրության, զոհաբերության ու հայրենասիրության:

Արարայի ճակատամարտից հետո Արեւելյան լեգեոնը Ալենբիի բանակի կազմում առաջանալով դեպի հյուսիս՝ հոկտեմբերի 20-ին մտնում է Բեյրութ, ուր նրան միանում է Կիպրոսից ժամանած պահեստային 4-րդ վաշտը: Լեգիոնին են զինվորագրվում նաեւ Սիրիա տարագրված հայերը՝ կազմելով առանձին 3-րդ վաշտը: Սակայն նոր կամավորների հոսքը ընդհատվեց 1918թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիայի հետ կնքված զինադադարով:

Ֆրանսիական իշխանության եւ հայ ազգային պատվիրակության միջեւ կայացած համաձայնությամբ հայ լեգեոնականներին իրավունք էր տրված գրավելու Կիլիկիան: Ուստի Արեւելյան լեգեոն անվանումը փոխվեց Հայկական լեգեոնի:

Հայ լեգեոնականների մի մասը Բեյրութից ֆրանսիական նավերով փոխադրվում է Ալեքսանդրեթ, իսկ մյուս մասը՝ անգլիական նավերով դեկտեմբերի կեսերին Մերսին:


*Մուսա լեռան հերոսամարտի ղեկավարներից՝ Ռամկավար Եսայի Յաղուբյանը*

1918 թվականի դեկտեմբերի 17-19-ին Հայկական լեգեոնի զինվորները ոտք դրեցին բաղձալի Կիլիկիա:

Լեգեոնականները Կիլիկիա մտան խոր հավատով ու համոզմունքով, որ այնտեղ պետք է հաստատվի հայկական պետություն, ու իրենք էլ պիտի լինեն կորիզը հայկական բանակի:

Անառարկելի փաստ է՝ 1918թ. դեկտեմբերի 17-ից մինչեւ 1919 թվականի մայիսի 28-ը Կիլիկիան գրավող բանակը միայն Հայկական լեգեոնն էր:

Անառարկելի փաստ է. հայ կամավորը իր ինքնազոհաբերմամբ տեր եղավ ու սրբորեն կատարեց զինվորի պարտքը, եւ Հայկական լեգեոնը մնաց հավատարիմ ձեռք բերված պայմանավորվածությանը:


*3-րդ վաշտի սպաներն ու ենթասպաները*

Սակայն 1914-1918թթ. Թուրքիայի դեմ պատերազմող տերություններից Ֆրանսիան առաջինն էր, որ հարաբերությունների մեջ մտավ Անկարայի կառավարության հետ, դիվանագիտական կապեր հաստատեց եւ իր դաշնակիցներից, առաջին հերթին Անտանտը ոգեշնչող Անգլիայից անջատ, քաղաքական պայմանագիր կնքեց նրա հետ (1921թ. հոկտեմբերի 20-ին):

Մյուս կողմից բոլշեւիկյան Ռուսաստանն էր իր սիրախաղը սկսել Թուրքիայի հետ: Այս ամենի հետեւանքը եղավ այն, որ Հայկական լեգեոնը կազմալուծվեց եւ ցրվեց:

Իսկ 1921թ. դեկտեմբերի 19-ին վերջին ֆրանսիական վաշտը, վերջին քրիստոնյայից հետո թողեց Ադանան, որտեղ ռամկավար մեծանուն գործիչ Միհրան Տամատյանի գլխավորությամբ հռչակված Կիլիկիայի անկախ պետությունը Ֆրանսիայի դավաճանության պատճառով 1-օրյա կյանք է ունեցել:

Ի դերեւ եղան հայի հույսերն ու երազները: Հայ լեգեոնականի, վերջ ի վերջո համայն հայ ժողովրդի ինքնազոհողությունը շահագործվել եւ դավաճանության զոհ էր դարձել: Հայը դարձյալ իր տառապանքի առջեւ կանգնած էր մեն-մենակ:

Ամենեւին խնդիր չունեմ վերծանել նվիրական գաղափարների ձախողման պատճառները, որպես կանոն մեղավորներ փնտրել եւ հատկապես ուրիշների մեջ: Նպատակս է երախտապարտ հիշատակումով արժանին մատուցել այն հազարավոր զինվորներին, որոնց հերոսությունը հանիրավի անտեսված է ու հաճախ մոռացված, բայց որոնց անունների ընդհանուր հայտարարը մեկն է՝ Հայկական լեգեոն:

Հայ լեգեոնականը վրիժառու էր եւ վրեժը լուծելու ամենավեհ կերպն էր ընտրել՝ հայրենիքին ծառայել որպես մահապարտ, որին էլ հավատարիմ մնաց մինչեւ վերջ: Նրանց ոգեղեն թռիչքը հայրենյաց սահմանները չհաստատեց երկրի վրա, բայց ունեցավ հոգեւոր ընթացք, որը ծավալումներ ստացավ օր օրի, ու ծաղկեց ամեն մի ծնվող հայ երեխայի աչքերում, դարձավ արյան գույն, փոխանցվելով սերնդեսերունդ, դարձավ ենթագիտակցությամբ կարգավորվող ապրելակերպ, դարձավ կամավորականի մշտարթուն ազնվախորհուրդ, որն առաջին հերթին արժանապատվության զգացում է, իր համայնական հավաքականության մեջ ազգային ինքնության դիմագիծը բնորոշող:

Հայկական լեգեոնը չհասավ իր վերջնական նպատակին, բայց լեգեոնականները, որոնք լուռումունջ, առանց ցուցադրության կատարեցին իրենց պարտքը, չտրտնջալով զոհողություններից, համեստորեն խոնարհվելով ընդհանուրի շահի առջեւ, արժանի են փառաբանման, որպես հաղթող զինվորներ, քանի որ նրանք ցաքուցրիվ եղած հայի ոգեղենությունը, իրենց ուսերը իրար զարկելով նորից ի մի հավաքեցին ու արարեցին հայության ոգեղեն համատարած երկինքը, որի վճիտ կապույտը ազատ, անկախ եւ միացյալ հայրենիքի գաղափարն էր: Հայկական լեգեոնը կազմալուծվեց, հայ լեգեոնականները սփռվեցին աշխարհով մեկ. «Աննուաճ երազին կարօտով», բայց նրանց ամենամեծ նվաճումն այն էր, որ նրանք պարգեւեցին հային ոչ միայն հայրենիք կարոտելու, այլեւ հայրենիք ունենալու բարոյական իրավունքը:

Ուստի չեմ կարծում, թե մեզ պատիվ կբերի, եթե շարունակենք մեր աչքերին թողնել Խորհրդային Միության աչքակապուկը անհարգի ժամանակավրեպության քողով ծածկենք իսկապես արժանին, անհրաժեշտն ու մշտականը:

Ոնց որ շատ ենք հապաղում եւ արժանին չենք մատուցում ու գնահատում մեր պատմության այն երեւույթները, որոնք հավաքական արժեք են: Հավաքականությունը ենթագիտակցորեն թելադրվող արդյունք է, այսինքն հարատեւության բաղկացուցիչ մաս:

**ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Հայկական լեգեոնի կամավոր չնքուշցի Ղազար Ղասաբյանի թոռ**

# Թուրքիային գովերգող երկու բանաձեւ ԱՄՆ Կոնգրեսում

## *Քեմալ Աթաթուրքն անձամբ չի մասնակցել հայերի ջարդին, սակայն շրջապատված է եղել արյունարբու մարդասպաններով*

«**Ազգի**» նախորդ համարում, անդրադառնալով Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցի առնչությամբ նախատեսվող միջոցառումներին, նշել էինք, որ ապրիլի 24-ին ամերիկաբնակ թուրքերն ու ադրբեջանցիները պատրաստվում են ամերիկահայության ապրիլի 24-ի ցույցը ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանատան առջեւ հակակշռել նույն վայրում նախատեսվող նստացույցով, որտեղ «ցեղասպանության անհիմն պնդումների համար» հայերին դատապարտեն եւ զբաղեցնելով մայթը՝ թույլ չտան, որ վերջիններս մոտենան դեսպանատանը:

Միջոցառումների թվում պետք է նշել նաեւ ապրիլի 13-ին ԱՄՆ Սենատի շենքում 20 կոնգրեսականների մասնակցությամբ կազմակերպված հուշ-երեկոն, նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, որտեղ դեմոկրատական Ադամ Շիֆն այս տարվա ուղերձում «ցեղասպանություն» բառն օգտագործելու պահանջով նախագահ Օբամային գրած նամակն էր ընթերցել: Միջոցառմանը թուրքական կողմը պատասխանել էր ԱՄՆ կոնգրեսում Թուրքիայի հետ բարեկամության խմբի 4 համանախագահների Ներկայացուցիչների պալատ ներկայացրած «Հոկտեմբերի 29՝ Հանրապետության տոն» վերնագիրը կրող բանաձեւով:

Ինչպես երեկ նշել էր թուրքական մամուլը, դրան հետեւել է թուրքամետ կոնգրեսական Էդըլֆուս Թաունսի «Ապրիլի 23-ը՝ ազգային ինքնիշխանության եւ երեխաների տոն» բանաձեւը, որը նա Ներկայացուցիչների պալատին է հանձնել ապրիլի 19-ին:

Թուրքիայում հանրապետական կարգերը հռչակվել են 1923 թ. հոկտեմբերի 29-ին, այսինքն՝ առաջին բանաձեւն առնչվում է Թուրքիայի Հանրապետության ստեղծման հետ: Ինչ վերաբերում է ապրիլի 23-ին, ապա ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթուրքն այդ օրը բացի «ազգային ինքնիշխանության տոն» հռչակելուց, նվիրել էր նաեւ թուրք երեխաներին, որը 1924 թ.-ից ի վեր նշվում է երկրում:

Երկու բանաձեւերն էլ, ըստ ընթացակարգի, նախ կքննարկվեն ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում: Դրական արդյունքի դեպքում կհետեւի Ներկայացուցիչների պալատում դրանց քվեարկությունը: Թե ի՞նչ է ենթադրում թուրքական զույգ բանաձեւերի հնարավոր հաստատումը, պարզ չէ: Հեղինակները պարզապես գովեստի խոսքեր են շռայլել Թուրքիայի Հանրապետության եւ հիմնադրի հասցեին, գովերգել են թուրքական այսպես կոչված ժողովրդավարությունը, Բալկաններում, Մերձավոր եւ Միջին Արեւելքում, Կովկասում եւ Միջին Ասիայում կարեւորել են թուրքական պետության ստանձնած դերակատարության նշանակությունն Արեւմուտքի համար, ընդգծելով թուրք-ամերիկյան ռազմավարության դաշինքի առկայությունը:

Որքան էլ քաղաքականությունը չենթարկվի տրամաբանության, այնուամենայնիվ, կարծում ենք, Թուրքիայի Հանրապետության հռչակման օրը՝ հոկտեմբերի 29, ԱՄՆ-ում անկախության երկրորդ օր չի հռչակվի, ոչ էլ այս երկրում «երեխաների տոն» կհայտարարվի ապրիլի 23-ը: Այս դեպքում արդեն թուրքական նշված բանաձեւերը չեն կարող այլ նպատակ հետապնդել, քան հավասարակշռել հայկական բանաձեւերի հնարավոր նախաձեռնությունները, գովերգելով ԱՄՆ Կոնգրեսում ինչպես ժամանակակից Թուրքիային, այնպես էլ թուրքական ազգային պետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքին:

Թեեւ թուրքական կողմը, օգտվելով ամերիկացի մի քանի կոնգրեսականի ծառայությունից, շոու բիզնես է ձեռնարկում ԱՄՆ-ի կոնգրեսում, սակայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացն անդառնալի է, ճանաչումն անխուսափելի է նաեւ ԱՄՆ-ի համար: Այսինքն, շոուները չեն կարող ճանաչման գործընթացի ծավալումը կասեցնելու միջոց դառնալ, ոչ էլ դրանով հնարավոր կլինի դիրքերի սպառումից փրկել թուրքական ժխտողականությունը:

Ինչ վերաբերում է Թուրքիայի Հանրապետությանը, ապա նրա հիմնադիր Քեմալ Աթաթուրքը շրջապատված էր մինչեւ կոկորդը հայի արյան մեջ թաթախված մարդակերպ դահիճներով: Օրինակ՝ Թոփալ Օսմանը, որն իր ավազակախմբով սպանել է տասնյակ-հազարավոր պոնտացի հույների, պարծենալով պատմում էր, թե Տրապիզոնում ինչպես հայ մանուկներին ծղոտե ամանների մեջ ծովն է նետել կամ ինչպես շոգենավի կաթսայի մեջ ողջակիզել է անպաշտպան հայ կանանց ու ծերերին:

Այս թուրք մարդասպանն այնուհետեւ դարձավ Թուրքիայի Հանրապետության հիմնադիր նախագահի Քեմալ Աթաթուրքի թիկնազորի հրամանատարը: Կամ ազգային պատերազմներում Աթաթուրքին թիկունք տված Հասան փաշան, որը հայերին աներեւակայելի խոշտանգումներով սպանելու համար ստացել է «դելի», այսինքն՝ խելառ մականունը, եւ թուրք պատմագրության մեջ հիշատակվում է «Դելի Հասան փաշա», եղել է Աթաթուրքի դասընկերը, իսկ հետագայում Սաբիհ ազգանունն ստացած Ալի Իհսան փաշան, որին Դիլմանի ճակատամարտում ջախջախել է զորավար Անդրանիկը, ոչնչացնելով սրա ոհմակից ավելի քան 700 հրոսակի, 1500 արդեն որբացած հայ մանուկներին երեք օր ծարավ պահելուց հետո, երրորդ օրը կարգադրել էր ջուր տալ, ապա եւ հրամայել կենդանի թաղել, եղել է Աթաթուրքի համակուրսեցին ռազմական ուսումնարանում:

Թեեւ Քեմալ Աթաթուրքն անձամբ չի մասնակցել հայերի բնաջնջմանը, նա Առաջին աշխարհամարտի տարիներին Հիջազի ռազմաճակատում էր, սակայն շրջապատված էր միմիայն հայ ժողովրդի արյունախում դահիճներով, ըստ երեւույթին, բարձր գնահատելով մարդասպաններին: Այսինքն՝ Թուրքիայի Հանրապետության հիմնադիրները եղել են սոսկ մարդասպաններ: Որքան էլ ամերիկացի մի քանի կոնգրեսական գովերգեն Թուրքիային, պետք է իմանալ, որ այլ ժողովրդի արյան վրա արյունախում գազանների ստեղծած պետությունները կարող են առավելագույնս ունենալ հանցակից ժողովուրդ, որին խորթ եւ անհասանելի է օրինակելի ժողովրդավարությունը:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Լիբիայի ընդդիմության առաջնորդը եվրոպական մայրաքաղաքներում

## *Հնարավոր է ՆԱՏՕ-ի ցամաքային գործողություն*

Լիբիայի Անցումային ազգային ճակատի (ԱԱԽ) ղեկավար Մուստաֆա Աբդել Ջալիլը եվրոպական մայրաքաղաքներում առաջին անգամ հանդես է գալիս իբրեւ «Ազատ Լիբիայի նոր ղեկավար»: Երեքշաբթի օրը Հռոմում նրան ընդունել են Իտալիայի նախագահ Ջորջո Նապոլիտանոն եւ վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին: Չորեքշաբթի օրը Փարիզում Աբդել Ջալիլը հանդիպել եւ բանակցել է Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի հետ, հաղորդում է Ֆրանսմրեսը:

Արեւմտյան Եվրոպայում Աբդել Ջալիլը քննարկում է իրավական մեխանիզմներ, որոնք Լիբիայի ընդդիմությանը թույլ կտան վաճառել նավթամթերքներ: «Իտալիան, Ֆրանսիան եւ Քաթարը Լիբիայի հետ պայմանագրեր կնքելիս կունենան արտոնություններ», ընդգծել է ԱԱԽ ղեկավարը:

Միաժամանակ հաղորդվում է, որ ՆԱՏՕ-ն Լիբիայում կարող է ցամաքային գործողություն սկսել մարդասիրական բեռների անվտանգության ապահովման պատրվակով: «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության տվյալներով, իտալացի մի ծովակալի



հրամանատարությամբ արդեն կազմվել է ծովային հետեւակի 1500 մարտիկներից բաղկացած արագ արձագանքման ջոկատ:

Մեծ Բրիտանիան հայտարարել է, որ Բենգազի կգործուղի մի խումբ դիվանագետների, ինչպես նաեւ «փորձառու զինվորական խորհրդականների», որոնք ԱԱԽ-ին պետք է սովորեցնեն «խաղաղ բնակիչներին պաշտպանելու» եղանակները:

Լիբիայում շարունակվող ռազմական գործողությունները հաստատում են, որ Տրիպոլիի վարչակարգը «ամուր կաղին» է: Քադդաֆին մերթ ընդ մերթ ցուցադրում է, որ իր զինանոցը անսպառ է: Այսպես, երեքշաբթի օրը Աջդաբիա քաղաքի դեմ մեծ հեռահարության հրթիռների օգտագործումը վկայում է, որ Քադդաֆին դեռ շատ «անակնկալներ» ունի եւ ապստամբներին կարող է անհանգստացնել Լիբիայի տարբեր վայրերից:

ԱԴՐԲԵՋԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# Ո՞ւմ հետ եւ ի՞նչ տոնով է խոսում Բաքուն

Որ Ադրբեջանում, կոնկրետ դարաբաղյան հիմնահարցի բանակցությունների հետ կապված, դժգոհ են «արտասահմանյան որոշ ուժերից», գիտենք վաղուց: Գիտենք նաեւ, որ ոչ վաղ անցյալում նախագահ Ալիեւն անձամբ «այդ ուժերին» անվանում էր «Հայաստանի բարեկամներ»: Հետեւաբար բոլորովին պատահական չէ, որ հարեւան երկրի նախագահը, արտգործնախարարը, նրանց աշխատակազմերի «որոշ ակտիվիստներ» շարունակում են, ոչ ավել, ոչ պակաս, պահանջել միջազգային հանրությանը՝ «ճնշում գործադրել ագրեսոր Հայաստանի վրա»: Ի դեպ, հաշվի առնելով, թե այս օրերին ինչպես է նույն միջազգային հանրության «արեւմտյան մասը» ճնշում գործադրում որոշ ագրեսորների ու բռնակալների նկատմամբ, ակնհայտ է դառնում, որ Հայաստանին, փաստորեն, միջազգային հանրությունը ամենեւին էլ չի ընկալում՝ որպես ագրեսորի: Այս հանգամանքն է, թերեւս պատասխանում նաեւ հարցին, թե ԼՂ հիմնահարցի խաղաղ բանակցություններում կողմերից որ մեկն է ավելի կառուցողական: Միեւնույն ժամանակ՝ հարեւան երկիրն առանձնանում է մեկ այլ յուրահատկությամբ եւս: Փաստորեն Ադրբեջանի ղեկավարությունը ոչ միայն «լուռ է խոսում», որ «Ադրբեջանը աշխարհի ամենադինամիկ զարգացող երկիրն է, անկախ պետականություն, որի հետ հաշվի են նստում բոլորը», այլեւ այս համոզմունքը փորձում է ապացուցել: Այսպես՝ այն ժամանակ, երբ Բաքվի՝ «ազատություն» բղավող ցուցարարներից «հոգնած» Իլհամ Ալիեւը շրջայց է կատարում երկրի շրջաններ ու Աստարայում հայտարարում, թե «Ադրբեջանի զարգացումը չուզեցող որոշ օտար ուժեր խաթարում են երկրի կայունությունը», պաշտոնական Բաքուն չեղյալ է հայտարարում այս տարվա մայիսի 15-25-ը նախատեսված ամերիկա-ադրբեջանական համատեղ զորավարժությունները: Ընդ որում, սա այն բանից հետո, երբ ԼՂՀ հետ շփման գոտում մերձակա տարածքներում վերջերս Ադրբեջանն իրականացրեց օդուժի ինքնուրույն զորավարժություն:

ԱՄՆ-ի հետ համատեղ զորավարժությունները չեղյալ հայտարարելու մասին ապրիլի 19-ին հաղորդեց «ԱՊԱ»-ն, սակայն առանց նշելու, թե ով է չեղյալ հայտարարողը: Այս հարցին էլ երեկ պատասխանեց Բաքվում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Թերի Դեյվիդսոնը: Վերջինս, կրկին «ԱՊԱ»-ի փոխանցմամբ, Բաքվում հրավիրած ասուլիսի ժամանակ մասնավորապես ասել է. «Զորավարժությունները հետաձգելու որոշումը կայացրել է Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, հետեւաբար ճիշտ կլինի դիմեք հենց նախարարություն»: Դեյվիդսոնն, իհարկե, խոսել է «ամերիկա-ադրբեջանական ռազմական գործակցության բարձր մակարդակից, որ երկկողմ ծրագրերը դեռ պետք է շարունակվեն» եւ այլն:

Այս ամենից հետո ԱՄՆ դեսպանատան պաշտոնյան մեկ այլ ուշագրավ հայտարարություն է արել: Խոսելով Բաքվում ընդդիմության կազմակերպած բողոքի ակցիաներից՝ Դեյվիդսոնը նշել է. «Մեր դեսպանատունը մեկ անգամ չէ, որ նշել է հավաքների ազատության եւ կամարտահայտության կարեւորության մասին: Մենք կարծում ենք, որ խաղաղ հանրահավաքները եւ խոսքի ազատությունը այն իրավունքի հիմքերից են, որով շարժվում են ժողովրդավարական հասարակություններում»: Ստացվում է՝ ամերիկացի պաշտոնյան ընդգծում է ադրբեջանական հասարակության ոչ ժողովրդավարական լինելը:

Ինչեւէ՝ Իլհամ Ալիեւը փաստորեն «չի կարողանում ներել» ԱՄՆ-ին՝ մեկ տարուց ավելի Բաքվում դեսպանի աթոռը թափուր թողնելու համար: Բացի դրանից՝ հարեւան երկրում թերեւս էականորեն են զգում, որ ԼՂ հիմնահարցի բանակցություններում որեւէ գերտերություն, «արտասահմանյան ուժ» պարզապես ցանկություն չունի «ճնշում գործադրելու» Հայաստանի վրա: Միայն այս կերպ, ինչպես նաեւ ԱՄՆ պետքարտուղարության հրապարակած ամենամյա զեկույցների «ադրբեջանական մասի» պատճառով կարելի է հիմնավորել այն քաղաքական տոնը, որով Բաքուն խոսում է կոնկրետ Վաշինգտոնի հետ: Ի դեպ, ԱՄՆ-ում պետք է որ «ադրբեջանական ուժի» մասին հիմնավոր պատկերացումներ արդեն իսկ ունենային՝ հաշվի առնելով այն «ակտիվ մասնակցությունը», որ ունեցավ Բաքուն Արեւմուտքի համար այդքան կարեւոր հայ-թուրքական գործընթացում:

Հ. ԱՓՅԱՆ

# Մեծ Բրիտանիան չի հանձնի Մուշարաֆին

**Մեծ Բրիտանիայի իշխանությունները հրաժարվում են քննության առնել Պակիստանի նախկին նախագահ Փերվեզ Մուշարաֆին հանձնելու այդ երկրի դատարանի պահանջը: Այդ մասին հաղորդում է պակիստանյան DawnNews հեռուստաալիքը:**

**Լրագրողների տվյալներով, բրիտանական ԱԳՆ-ում այդ որոշումը հիմնավորել են նրանով, որ երկու երկրների միջեւ գոյություն չունի կալանավորների փոխանակման համաձայնագիր: Ավելի վաղ՝ Իսլամաբադ կատարած այցելության ժամանակ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Կեմերոնը հայտարարել էր, որ երկրի իշխանությունները այնուամենայնիվ կքննարկեն հարցը:**



**Պակիստանի ահաբեկչության գործերի դատարանը 2011-ի փետրվարի 12-ին կարգադրել էր ձերբակալել նախկին նախագահին: Պատճառը այն կասկածներն էին, թե Մուշարաֆը մեղսակից է 2007-ի դեկտեմբերին ահաբեկչությունից զոհված նախկին վարչապետ Բենազիր Բհուտոյի սպանությանը:**

**Բհուտոյի սպանության ակտիվ հետաքննությունը սկսվել էր միայն 2009-ին, ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովի մասնակցությամբ: Վերջինս ահաբեկչության գործով սկսեց զբաղվել Մուշարաֆի նախագահության ավարտից եւ նրա Լոնդոն մեկնելուց հետո:**

**Ինքը՝ նախկին նախագահը, վերջերս տված հարցազրույցում հայտարարել է, թե չի վախենում դատից եւ բանտից, բայց մտադիր չէ մոտ ժամանակներս վերադառնալ Պակիստան: Մուշարաֆը չի մանրամասնել, թե ինքը երբ պատրաստ կլինի մեկնել հայրենիք: Նա միայն ասել է, որ ինքը «սպասում է հարմար պահի»:**

# Ուղղում

Մեր թերթի երեկվա՝ ապրիլի 20-ի համարում լույս տեսած «Օբամայի վստահելի անձը մնում է Փաուերը» խորագրով հոդվածը թյուրիմացաբար վերագրվել է Երվանդ Ազատյանին, մինդեռ հոդվածը տպագրվել է Դուբլինում «Այրիշ սանդի ինդիփենդենտս» (Irish Sunday Independent) թերթում, որտեղից արտատպել է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթն իր ապրիլի 16-ի համարում:

Հայցում ենք ընթերցողների ներողամտությունը:

Խմբ.

# Լուսին Դինքը կնկարահանի ֆիլմ Վիլյամ Սարոյանի մասին. Հայ-թուրքական ֆիլմերի պրեմիերաներ Ստամբուլում

Մի քանի կարճամետրաժների հեղինակ, ստամբուլաբնակ երիտասարդ կինոռեժիսոր Լուսին Դինքը կնկարահանի Վիլյամ Սարոյանին նվիրված ֆիլմ՝ «Ճանապարհորդություն Բիթլիս» վերնագրով: Նախագիծը հաղթող է ճանաչվել եւ Եվրասիա համագործակցության հիմնադրամի սահմանած 30 000 դոլար մրցանակին արժանացել ապրիլի 11-13-ը Ստամբուլում տեղի ունեցած Հայաստան-Թուրքիա կինոպլատֆորմի շրջանակներում Վավերագրական ֆիլմերի աջակցությանն ուղղված հանդիպմանը: Անադոլու Քյուլթուրի՝ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի հետ համագործակցությամբ կազմակերպած աշխատանքային հանդիպմանը ներկայացվել էին 30-ից ավել նախագծեր Թուրքիայից եւ Հայաստանից, որոնցից ընտրվել եւ բուն հանդիպմանը քննարկվել են ութը՝ չորս հայկական եւ չորս թուրքական:




Լուսին Դինքի՝ Հրանտ Դինքի եղբոր աղջկա ֆիլմը կներկայացնի 1964 թվականին Վիլյամ Սարոյանի Բիթլիս կատարած ուղեւորությունը: 11 տարի անց մեծ գրողը հարցազրույցներից մեկում անդրադարձել էր այդ ուղեւորությանը, հիշել Բիթլիսը՝ ասելով, որ «քաղաքը աներեւակայելի է եւ վեր է նրանից, թե ինչպիսին էի այն պատկերացնում: Բայց այն մերը չէ: Այն մերն է, բայց պատկանում է ուրիշներին... Սարոյանները հոս են, ուսկի՞ց եկան»:

Ըստ գաղափարի՝ կինոխցիկը պետք է հետեւի այն ճանապարհին, որը Սարոյանը անցել է մինչեւ Բիթլիս եւ ցույց տա արխիվային լուսանկարներ, նյութեր եւ այսօրվա Բիթլիսը: Կլինի Սարոյանի երկու պատմվածքների բեմադրում, եւ վերջում նրա բոլոր հերոսները կհավաքվեն մեկ հարկի տակ՝ անիմացիայի միջոցով: Նախատեսվում է համագործակցություն հայ անիմատորների հետ:

Նախագծի պրոդյուսերը համշենահայ ռեժիսոր, «Ոսկե ծիրան» կինոփառատոնի մրցանակակիր Օզջան Ալփերի եղբայրն է՝ Սոներ Ալփերը:

Երկրորդ մրցանակին արժանացել է Արթուր Բախտամյանի «Ճանապարհորդություն Նոր տարվա նախօրյակին» նախագիծը: Այն Անադոլու Քյուլթուրի կողմից ստացել է տեխնիկական աջակցություն եւ երկու հազար դոլար: Նախագիծը 90 տոկոսով կֆինանսավորի թուրքական կողմը: «Ոսկե ծիրան» կինոփառատոնը նույնպես ցույց կտա տեխնիկական աջակցություն ֆիլմի ստեղծման համար:

Աշխատանքային հանդիպմանը զուգահեռ Ստամբուլի միջազգային կինոփառատոնի շրջանակներում տեղի ունեցավ Հայ-թուրքական կինոպլատֆորմի նկարահանած 5 կարճամետրաժների համաշխարհային պրեմիերան: Ցուցադրվեցին Դիանա Կալդունյանի «Գալաթա», Ջանայ Օզդենի «Տիկնիկային թատրոն», Գյուլենգյուլ Ալթինթաշի «Մի կորչեք, երեխաներ», Արթուր Սուքիասյանի «Աղավնիների վարպետը» եւ Գոռ Բաղդասարյանի «Հարեւաններ» ֆիլմերը:

Հայ երիտասարդ ռեժիսորները, վերադառնալով Ստամբուլից, պատմում էին, որ հանդիսատեսը զարմանալիորեն դրական էր տրամադրված, եւ արձագանքները շատ էին թե՛ բուն ցուցադրության ընթացքում, թե՛ դրանից հետո կազմակերպված երեկույթի ժամանակ:

Հանդիսատեսների շարքում էին Թուրքիայի առաջատար եւ հեղինակավոր ռեժիսորներ Եշիմ Ուստաօղլուն եւ Սեմիհ Կապլանօղլուն: Ծրագիրը արժանացել է նրանց հավանությանը, եւ մի շարք փառատոների ներկայացուցիչներ նույնպես բարձր են գնահատել նախագիծն ու վերցրել են սկավառակներն իրենց հետ:

**«Ոսկե ծիրան» կինոփառատոնի մամլո կենտրոն**

# Ցեղասպանությանը նվիրված ներկայացումը շրջանցում է կարծրատիպերը

**«Սթեյջ 7» արտիստների ու գրողների համագործակցության կենտրոնը հանդես կգա նոր ներկայացմամբ: «Սթեյջ 7» ստուդիայի դերասանները այս օրերին պատրաստվում են նոր բեմադրության, որը նվիրված է Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցին: Բայց հնարավոր է՝ շատերին այն դուր չգա, քանի որ շրջանցել է մեզանում ընդունված կարծրատիպերը: «Այսինքն՝ Ցեղասպանությանը նվիրված ներկայացման մեջ կա հումոր, երգ, պար ու հարսանիք, ինչը ցույց է տալիս, որ մեռնողի հետեւից չի կարելի մեռնել, ապրել է հարկավոր», երեկ ասուլիսի ժամանակ ասաց դերասան Արտաշես Ալեքսանյանը, որը վերոնշյալ՝ «Հայերի դասը մարդկության դասն է» կոչվող ներկայացման բեմադրիչն ու ռեժիսորն է: Նրա խոսքով՝ լաց լինելը շատ ավելի հեշտ է, քան ստեղծելն ու արարելը: Իսկ դերասան Գուրգեն Անտոնյանն էլ հավելեց. «Մենք կարոտի ու թախծի ժողովուրդ ենք, եւ լացը լաց է բերում արտահայտությունը խոր իմաստ ունի»: Ըստ բանախոսների՝ իրենք ձգտել են ցույց տալ, որ պետք է համախմբվել եւ շարունակ լաց լինելու փոխարեն ապրել նոր կյանքով: Սցենարի հեղինակն Արտաշես Ալեքսանյանն է, սցենարում կան նաեւ մեջբերումներ Հովհաննես Շիրազի ստեղծագործություններից, իսկ ժամանակաշրջանը ներառում է 1915-ից մինչեւ մեր օրերը:**




**«Արմաս» ակումբում կենտրոնի նախագահ Տիգրան Նալչաջյանը տեղեկացրեց, որ առաջին բեմադրությունը լինելու է այսօր, ապրիլի 21-ին, Հրազդանում, իսկ Երեւանում կբեմադրվի ամսի 22-ին՝ Մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում: Արտաշես Ալեքսանյանը դիմել է մշակույթի նախարարությանը օժանդակություն ստանալու համար, սակայն նախարարությունից պատասխան չի ստացել: Դերասանը նշեց, որ իրենց մեծապես օժանդակել է՝ Մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետը՝ հանձին դեկանի պաշտոնակատար Գեւորգ Թադեւոսյանի: Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճը փորձերի ու ներկայացման համար ստուդիային տրամադրվել է անվճար:**

**Բեմադրության մեջ ներառված են շուրջ 30 դերասաններ, հիմնականում երիտասարդներ, որոնք չունեն դերասանական կրթություն, սակայն, ըստ Արտաշես Ալեքսանյանի, դերասան չլինելով հանդերձ՝ բավականին շնորհալի են:**

**Ի.Պ.**

# Ստամբուլի կինոթատրոնում հնչեց Ցեղասպանություն բառը

Ստամբուլի միջազգային կինոփառատոնի շրջանակներում տեղի է ունեցել «Մի՛ մոռացիր ինձ, Ստամբո՛ւլ» ֆիլմի պրեմիերան: Ֆիլմը ներկայացնում է տարբեր ազգությունների մարդկանց պատմությունները, որոնց միավորում է բազմամշակույթ Ստամբուլը: Այն կազմված է հինգ խաղարկային նովելներից, որոնց ռեժիսորները տարբեր ազգերի ներկայացուցիչներ են՝ հայ, հույն, հրեա, պաղեստինցի եւ թուրք: Ամբողջ նախագծի պրոդյուսերը Հուսեյն Կարաբեյն է: Ֆիլմի մի մասի հեղինակը «Ոսկե ծիրան» կինոփառատոնի մրցանակակիր Էրիկ Նազարյանն է: Նա ներկայացնում է ուդ նվագող սփյուռքահայ երաժշտի պատմությունը, որը գալիս է Ստամբուլ եւ փորձում է գտնել իր պապի՝ ժամանակին հռչակավոր ուդի վարպետի տուն-արհեստանոցը: Մի ընտանիքի պատմության միջոցով ներկայացվում է հայի դաժան ճակատագիրը Թուրքիայում: Գլխավոր դերում ֆրանսիահայ դերասան Ժաքի Ներսիսյանն է: Հատկանշական է, որ պատմության մեջ առաջին անգամ պրեմիերայի ժամանակ Ստամբուլի կենտրոնում մեծ էկրանից հնչեց «ցեղասպանություն»՝ գենոցիդ բառը:

Հայ հանդիսատեսը հնարավորություն կունենա ֆիլմը դիտել ամռանը՝ «Ոսկե ծիրան» 8-րդ միջազգային կինոփառատոնի շրջանակներում:

**«Ոսկե ծիրան» կինոփառատոնի մամլո կենտրոն**

## ԹԲԻԼԻՍԻ

# Ալեքսանդր Մանթաշովի մահվան 100-ամյակին նվիրված հուշ-երեկույթ եւ հոգեհանգիստ



**Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի եւ Վրաստանում Հայաստանի դեսպանության նախաձեռնությամբ, ապրիլի 19-ին ժամը 12:00-ին Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու գավթում, որտեղ հանգչում է Ալեքսանդր Մանթաշովի աճյունը, կայացավ հուշ-երեկույթ եւ հոգեհանգստյան կարգ, նվիրված մեծ բարերարի մահվան 100-ամյակին:**

**Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը կատարեց հոգեհանգստյան արարողություն, որից հետո, դիմելով հասարակությանը, բարձր գնահատեց Ալեքսանդր Մանթաշովի ներդրումը հայ եկեղեցաշինության, արվեստի, գիտության եւ այլ բնագավառներում:**

**Երեկույթին մասնակցում էին Ալեքսանդր Մանթաշովի կառուցած Թբիլիսիի թիվ 43-րդ հանրային դպրոցի սաները եւ ուսուցչական կազմը, որը, չգիտես ինչու, կրում է ոչ թե մեծ բարերարի, այլ բանաստեղծ Տիցիան Տաբիձեի անունը:**

**Բարերար Նելսոն Պետրոսյանը իր ելույթում նշեց, որ ամեն ունեւոր հայ պետք է ձգտի նմանվել Ալեքսանդր Մանթաշովին :**

**«Հայարտուն» կենտրոնի մշակույթի բաժնի ղեկավար՝ Լեւոն Չիդիլյանը նշեց, որ այս տարի Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու գավթում կտեղադրվի Ալեքսանդր Մանթաշովի արձանը, կտպագրվի գիրք (հայերեն, վրացերեն եւ ռուսերեն լեզուներով) եւ տեղի կունենա գիտաժողով նվիրված մեծ բարերարին:**

**«Հայարտուն»**

# Երեւանյան դիմանկարներ՝ ըստ «Սիժեստ»-ի

**Փարիզի «Սիժեստ» (Sigest) հրատարակչությունը տարիների աշխատանքային փորձ ունի՝ ֆրանսերեն եւ հայերեն շուրջ 40 գրքերի լույսընծայմամբ: Տնօրենը՝ Վարուժան Սիրապյանը, վերջին տարիներին հայաստանյան հրատարակչությունների հետ համագործակցությունը աստիճանաբար սերտացնում է: «Արեգ» հրատարակչության «Հայաստանի հրաշալիքները» ֆրանսերենով հանրագիտարանի եւ ֆրանսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն զրուցարան-բառարանի փարիզյան տպագրությունները բավականին հաջողություն ունեցան: Այդ համագործակցության արդյունքում շուտով լույս կտեսնի Էրոլ Օզքորայի «Թուրքիա. մշտական զինվորական հեղաշրջում» գիրքը՝ Պետրոս Քեշիշյանի հայերեն թարգմանությամբ եւ ֆրանսերեն թարգմանությամբ Փարիզում լույս կտեսնի Հովհաննես Թումանյանի բալլադների, պոեմների եւ հեքիաթների պատկերազարդ ընտրանին, որ կներկայացվի Ժնեւում կայանալիք միջազգային տոնավաճառում:**

**«Սիժեստ»-ի վերջին թողարկումը՝ «Երեւանյան դիմանկարներ» ֆրանսերեն գրքույկը քաղաքի բնակիչների միջոցով Երեւանը ներկայացնելու փորձ է՝ առօրեական եւ աշխատանքային պատմություններ, լուսանկարների ուղեկցությամբ: Գրքի շնորհանդեսը «Արտբրիջում» կայացավ որպես զրույց երեւանյան լավագույն մտավորական մի շրջանակի հետ: Եղան առաջարկներ ապագա հրատարակչական ծրագրերի շուրջ: «Սիժեստ»-ին հանգամանալի անդրադարձ՝ ավելի ուշ:**

**Մ. Բ.**

# Ակադեմիա պատկերասրահում գրքի շնորհանդես եւ ցուցահանդես

Մարտին Շահբազյանի «Հայաստանի մարզերը» գրքի շնորհանդեսը եւ լուսանկարների ցուցահանդեսը երեկ տեղի ունեցավ «Ակադեմիա» պատկերասրահում: Հայտնի լուսանկարիչը ունեցել է անհատական ցուցահանդեսներ Աֆղանստանում, Արաբական Միացյալ էմիրություններում, Բուլղարիայում եւ Երեւանում: Շահբազյանը նաեւ հրատարակել է «Խաչքարեր», «Իմ Հայաստան», «Երկրաշարժ» ալբոմները: Վերջին գիրքը բաղկացած է 500 լուսանկարներից, որոնց միջոցով կարող ենք բացահայտել Հայաստանի մարզերը ամբողջական հարստությամբ: Գիրքը հրատարակվել է պետական աջակցությամբ:




Ինչպես նշեց հեղինակը, «Սա Հայաստանն է՝ իմ հպարտության ամենամեծ աղբյուրը: Ոչ միայն այն բանի համար, որ ես այստեղ եմ ծնվել եւ ապրել, այլեւ՝ այս պատկերները հարազատ են ու խոհուն: Հպարտանում եմ, որ իմ հայրենիքի ազգային արժեքները նաեւ համամարդկային են, քանզի նյութական ու հոգեւոր մշակույթի յուրաքանչյուր ստեղծագործություն իմաստավորված է մարդասիրությամբ ու ազատության եւ արժանապատվության վեհապանծ թռիչքով: 50-ամյա լրագրողական գործունեության ընթացքում բազմիցս եմ շրջագայել Հայաստանում, բայց ամեն անգամ ինքս ինձ համար այն նորովի եմ բացահայտել.....»:

Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը հեղինակին ողջունեց շնորհավորանքի ջերմ խոսքերով:

**Մ.Հ.**

# «Միկան» խախտեց տխուր ավանդույթը

## Գավաթի եզրափակչի առաջին մասնակիցը հայտնի է

Հայտնի դարձավ ֆուտբոլի Հայաստանի գավաթի եզրափակչի առաջին մասնակիցը: Վերջին 5 տարիների ընթացքում «Միկային» վերջապես հաջողվեց հաղթահարել «Բանանցի» արգելքն ու մտնել եզրափակիչ: Երեկ «Հրազդանում» կայացած գավաթի կիսաեզրափակչի պատասխան խաղում «Միկան» 1-0 հաշվով հաղթեց «Բանանցին»:



Մրցակիցների առաջին խաղում գրանցվել էր ոչ-ոքի՝ 3-3: Պատասխան խաղում «Միկային» միայն հաղթանակ էր անհրաժեշտ, մինչդեռ «Բանանցին» բավարարում էր նույնիսկ ոչ-ոքին: Սակայն առաջին խաղակեսում «Բանանցն» ավելի ակտիվ էր գործում՝ հույսը չդնելով ոչ-ոքի արդյունքի վրա: Սակայն գոլային պահերը ստեղծվեցին միայն խաղակեսի վերջում: Նախ Արտակ Դաշյանի վտանգավոր հարվածից հետո Գեւորգ Կասպարովը փրկեց «Միկային»: Իսկ քիչ անց Նարեկ Բեգլարյանի գլխով հարվածից հետո «Բանանցի» դարպասապահ Օդուլկին մի կերպ հեռացրեց գնդակը:

Ընդմիջումից հետո «Միկան» զգալիորեն ակտիվացավ՝ դիմելով վճռական գործողությունների: Եվ դա տվեց իր ցանկալի արդյունքը: 62-րդ րոպեին անկյունայինի խաղարկումից հետո Աղվան Մկրտչյանը մոտ տարածությունից գրավեց դարպասը: Մնացած ժամանակահատվածում հսկողություն պահպանելով, «Միկան» պահպանեց հաղթական հաշիվը՝ նվաճելով այնքան բաղձալի եզրափակչի ուղեգիրը:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

**Արմեն Շահգելդյան** («Միկա»)- Գավաթային հանդիպումները միշտ էլ դժվարին պայքարում են անցնում: «Բանանցն» արժանի մրցակից էր, որը վաղուց էր լուծել եվրոգավաթներում խաղալու հարցը: Իսկ մենք դեռ այդ հարցի լուծման ճանապարհին ենք ու հույներս մեր վրա պետք է դնենք: Այդ մասին խաղից առաջ ասել էի տղաներին: Առաջին խաղակեսում մեր խաղն չստացվեց, չկարողացանք գոլ խփել, սակայն սեփական դարպասն էլ անառիկ պահեցինք: 2-րդ խաղակեսում չինացի հարձակվողը շատ հաջող խաղի մեջ մտավ, բավական ակտիվ էր: Հենց նրա հարվածից հետո անկյունայինի իրավունք ստացանք եւ Աղվանը գեղեցիկ գոլ խփեց: Շնորհակալ եմ բոլոր ֆուտբոլիստներից՝ ներդրած ջանքերի համար: Կաշխատենք եզրափակիչում էլ հաղթել:

**Ստեւիցա Կուզմանովսկի** («Բանանց»)- Ընդհանուր առմամբ վատ չխաղացինք: Սակայն ամեն անգամ ֆուտբոլիստներից մեկի սխալի պատճառով թիմը պարտվում է, իմ եւ իրենց ողջ աշխատանքը ջուրն է թափվում: Գոլերի վերջնամասում էլ թերություններ կան: Թիմը 2-3 բարձրակարգ ֆուտբոլիստի կարիք ունի: Եթե նման խաղացողներ ունենայինք, ապա կարող էինք 1-ին տեղում հայտնվել: Իմ կարծիքով, գավաթը նվաճելու ամենամեծ հնարավորությունն «Ուլիսն» ունի:

Եվ այսպես, «Միկան» 6-րդ անգամ մտավ գավաթի եզրափակիչ: Թիմի մրցակիցը հայտնի կդառնա ապրիլի 27-ին «Հրազդանում» կայանալիք «Ուլիս»-«Շիրակ» կիսաեզրափակիչ պատասխան հանդիպումից հետո: Հիշեցնենք, որ առաջին խաղում 1-0 հաշվով հաղթել էր «Ուլիսը»:

# Պատանի ֆուտբոլիստները կմասնակցեն նախագահի գավաթի մրցաշարին

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների հավաքականը կմասնակցի ապրիլի 26-30-ը Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում կայանալիք ֆուտբոլի մրցաշարին, որում կխաղարկվի այդ երկրի նախագահի գավաթը: Մրցաշարին կմասնակցեն 8 երկրների պատանեկան հավաքականներ, որոնք նախնական փուլում բաժանվել են 2 խմբի: Հայաստանի հավաքականը 1-ին խմբում կմրցի Վրաստանի, Ուկրաինայի եւ Թուրքիայի ընտրանիների հետ: 2-րդ խմբում ընդգրկված են Ղազախստանի, Ադրբեջանի, Իրանի եւ Ուզբեկստանի պատանի ֆուտբոլիստները:

Մեր պատանիներն առաջին խաղը կանցկացնեն ապրիլի 26-ին Վրաստանի իրենց հասակակիցների հետ: Խաղը կսկսվի Երեւանի ժամանակով 13-ին: Հաջորդ օրը ժամը 15-ին կսկսվի Ուկրաինա-Հայաստան մրցախաղը, իսկ ապրիլի 29-ին նույն ժամին կմրցեն Հայաստանի եւ Թուրքիայի պատանեկան հավաքականները: Ապրիլի 30-ին եզրափակիչում նախագահի գավաթը կվիճարկեն խմբերում առաջին տեղ զբաղեցրած հավաքականները: 2-րդ տեղ զբաղեցրածները կվիճարկեն բրոնզե մեդալները: Խմբերում համապատասխան մյուս տեղերը զբաղեցրած հավաքականներն էլ կմրցեն միմյանց հետ:

Հայաստանի պատանեկան հավաքականը երեկվանից ֆուտբոլի ակադեմիայում կարճատեւ ուսումնամարզական հավաք է սկսել: Հավաքականի գլխավոր մարզիչ Սուրեն Չախալյանը հավաքի է հրավիրել 18 ֆուտբոլիստի: Նրանցից 7-ը հանդես են գալիս արտերկրում: Լեգեոնականներ են դարպասապահ Մարտին Գեւորգյանը («Կռիլյա Սովետով», Ռուսաստան), Ռուսաստանի Կոնոպլյովի անվան ֆուտբոլի ակադեմիայի սաներ, պաշտպաններ Ռոբերտ Դարբինյանն ու Սերոբ Գրիգորյանը, նույն գծի խաղացող Ռաֆայել Հակոբյանը («Ալկմար», Հոլանդիա), կիսապաշտպաններ Արտյոմ Սիմոնյանն ու Նորայր Տիգրանյանը (երկուսն էլ՝ «Զենիթ», Ռուսաստան) եւ հարձակվող Էդգար Հարությունյանը («Լոկոմոտիվ», Ռուսաստան):

Հայաստանում հանդես եկող ֆուտբոլիստներից հավաքին մասնակցում են դարպասապահ Գարեգին Մարկոսյանը («Փյունիկ»), պաշտպաններ Համլետ Ասոյանը («Փյունիկ»), Արման Ղազարյանն ու Վահան Ադոյանը (երկուսն էլ՝ «Բանանց»), կիսապաշտպաններ Սիփան Դավթյանը եւ Դավիթ Ասատրյանը (երկուսն էլ՝ «Բանանց»), Վիլեն Այվազյանն ու Տիգրան Մակարյանը (երկուսն էլ՝ «Փյունիկ»), Սարգիս Շահինյանը («Միկա»), հարձակվողներ Արամայիս Քյոսայանը («Բանանց») եւ Վարդան Բակալյանը («Փյունիկ»):

# Երկար մորուքի պատճառով ֆուտբոլիստը որակազրկվել է

Տաջիկստանի բարձրագույն խմբի առաջնության մասնակից «Խայր» թիմի ֆուտբոլիստ Պարվիզ Թուրսունովին երկար մորուքի պատճառով զրկել են հանդիպումներում հանդես գալու իրավունքից: Թիմի գլխավոր մարզիչ Տոխիր Մումինովը հայտարարել է, որ ղեկավարությունը ֆուտբոլիստի խաղի եւ արտաքին տեսքի առնչությամբ ոչ մի դժգոհություն չունի: Սակայն ֆուտբոլիստը մորուքի պատճառով խնդիրներ է ունենում իրավապահ մարմինների աշխատակիցների հետ: Ըստ մարզչի, Թուրսունովի բացակայությունը բացասաբար է անդրադառնում մրցելույթների վրա, քանի որ նա «Խայրի» առանցքային ֆուտբոլիստներից մեկն է:

Ֆուտբոլիստը հայտարարել է, որ եթե հարկ լինի ընտրություն կատարել ֆուտբոլի եւ մորուքի միջեւ, ապա ինքը նախապատվությունը կտա վերջինին: Ըստ Թուրսունովի, ֆուտբոլն աշխարհիկ հաճույք է, իսկ մարդիկ պետք է մտածեն հավերժության մասին: Նա գտնում է, որ մորուք կրելը Մուհամեդ մարգարեի կարեւոր պատվիրաններից է:

Տաջիկստանի ներքին գործերի նախարարությունն էլ հայտարարել է, որ ղեկավարությունը որեւէ ցուցում չի տվել իր աշխատակիցներին ճնշել մորուքավորներին: Նման դեպքերի բացահայտման դեպքում իրավապահ մարմինների աշխատակիցները կպատժվեն:

# Ժամկետները ճշտվեցին

Գերծանրքաշային կարգում IBF-ի, WBO-ի եւ IBO-ի վարկածներով աշխարհի չեմպիոն Վլադիմիր Կլիչկոյի եւ WBA-ի վարկածով չեմպիոնական գոտու տեր Դեւիդ Հեյի մենամարտը կկայանա հուլիսի 2-ին Գերմանիայի Համբուրգ քաղաքի «Իմտեխ Արենա» մարզադաշտում:

Վերջնականապես որոշվել է նաեւ WBC-ի վարկածով գերծանրքաշային կարգում աշխարհի չեմպիոն Վիտալի Կլիչկոյի եւ Թոմաշ Ադամեկի մրցամարտի անցկացման վայրը: Այն կկայանա Լեհաստանի Վրոցլավ քաղաքի նորակառույց մարզադաշտում սեպտեմբերի 10-ին:

ՇԱԽՄԱՏ

# Տաթեւ Աբրահամյանը մոտ է հաջողության

Շախմատի ԱՄՆ-ի առաջնության 5-րդ տուրում Վարուժան Հակոբյանը կրկին ոչ-ոքի ավարտեց հանդիպումը: Նրա մրցակիցն առաջատարներից մեկն էր՝ Յուրի Շուլմանը: Նախնական փուլի ավարտից 2 տուր առաջ Հակոբյանը 1-ին ենթախմբում 2,5 միավորով ընթանում է 3-րդ տեղում: Կիսաեզրափակչի ուղեգիր նվաճելու համար անհրաժեշտ է տեղ զբաղեցնել առաջին 2 հորիզոնականներում: Մնացած 2 տուրերում Հակոբյանը մրցելու է Ալեքսանդր Իվանովի եւ Յան Էլվեստի հետ: Ուղեգիր նվաճելու համար անհրաժեշտ է հաղթել մրցակիցներին, քանի որ ներկայումս Հակոբյանը մեկ միավորով հետ է մնում առաջատարներից՝ Գաթա Կամսկուց եւ Յուրի Շուլմանից:

Գաթա Կամսկին եւս հաշտություն կնքեց Ալեքսանդր Ստրիպունսկու հետ մրցավեճում: Ոչ-ոքի արդյունք գրանցվեց նաեւ Ալեքսանդր Իվանովի եւ Յան Էլվեստի մրցավեճում: Միակ արդյունավետ ելքը գրանցվեց Ռեյ Ռոբսոնի եւ Դանիել Նարոդիցկու պարտիայում, որում հաղթեցին սեւերը: Բացի Հակոբյանից, 2,5 միավոր ունեն նաեւ Իվանովը, Ռոբսոնը եւ Նարոդիցկին: 1,5-ական միավորով աղյուսակը եզրափակում են Յան Էլվեստն ու Ալեքսանդր Ստրիպունսկին:

2-րդ ենթախմբում միանձնյա առաջատարը Ռոբերտ Հեսն է, որը հաղթելով Գեորգի Կայդանովին, վաստակեց 4 միավոր: 3-ական միավորով հաջորդ տեղերում են Ալեքսանդր Օնիշչուկն ու Սեմ Շենկլենդը: Օնիշչուկը հաղթեց Լարի Քրիստիանսենին, Շենկլենդը պարտվեց Ալեքսանդր Շաբալովին: Բենջամին Ֆայնգոլդը պարտության մատնեց Յասեր Սեյրավանին:



Կանանց մրցաշարում Տաթեւ Աբրահամյանը 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Աննա Զատոնսկիխի նկատմամբ: Տաթեւը 3,5 միավորով 4-րդ տեղում է, որն այս պահին ապահովում է հաջորդ փուլ դուրս գալը: Մանավանդ որ 5-րդ տեղում ընթացող Աննա Զատոնսկիխը 1,5 միավորով հետ է մնում Տաթեւից: Փաստորեն նրա նկատմամբ տոնած հաղթանակը վճռորոշ կարող է լինել կիսաեզրափակչի ուղեգրի համար մղվող պայքարում:

3,5-ական միավոր են վաստակել նաեւ Սաբինա Ֆոյշորն ու Քամիլա Բագինսկայտեն: Ֆոյշորը պարտվեց Ռուսուդան Գոլեթիանիին, իսկ Բագինսկայտեն հաղթեց Իրինա Զենյուկին: Առաջատարի դերը 4 միավորով ստանձնեց Իրինա Կրուշը՝ պարտության մատնելով Ալիսա Մելեխինային:

# Սամվել Դարբինյանը կօգնի Անդրեասյանին

Հանրապետության փորձառու եւ բանիմաց մարզիչներից մեկը՝ Սամվել Դարբինյանը նշանակվել է Երեւանի «Արարատի» մարզիչ: Նա մարզչական աշխատանքում կօգնի թիմի գլխավոր մարզիչ եւ ակումբի փոխնախագահ Արկադի Անդրեասյանին:

Սամվել Դարբինյանը ժամանակին գլխավորել է «Արարատը» եւ թիմի հետ հաջողության է հասել: 1995-ին փոխարինելով ՀՖՖ-ի նախագահի պաշտոնում ընտրված Արմեն Սարգսյանին, Դարբինյանը թիմին Հայաստանի գավաթակրի կոչմանն արժանացրեց: Նշենք, որ նախորդ երկու տարիներին էլ «Արարատը» նվաճել էր գավաթը: Այդ տարի Սամվել Դարբինյանի գլխավորությամբ «Արարատը» հայկական թիմերից առաջինը հաղթահարեց եվրոպական գավաթների մրցաշարերի առաջին փուլը: Գավաթակիրների գավաթի մրցաշարում հյուրընկալվելիս 0-2 հաշվով զիջելով լեհական ԳԿՍ-ին, արարատցիները սեփական հարկի տակ նույն հաշվով ռեւանշի հասան, իսկ հետխաղյա 11 մ հարվածներով հաղթելով մրցակցին, մտան հաջորդ փուլ:

Սամվել Դարբինյանը հաստատես բեղմնավոր մարզչական գործունեություն է ծավալել «Երեւանում», որը նրա գլխավորությամբ 1997-ին նվաճել է Հայաստանի չեմպիոնի տիտղոսը: 2001-ին էլ, երբ կազմալուծումից 2 տարի անց կրկին կազմավորվեց «Փյունիկը», Սամվել Դարբինյանի գլխավորությամբ փյունիկցիները դարձան Հայաստանի չեմպիոններ: Փորձառու մասնագետը մարզել է նաեւ «Կիլիկիան» ու «Միկան», աշխատել է արտերկրում: Հուսանք, որ նրան Արկադի Անդրեասյանի հետ կհաջողվի ճգնաժամից դուրս բերել «Արարատը», որը հովանավորների ոչ պատշաճ ուշադրության պատճառով այսօր հայտնվել է մրցաշարային աղյուսակի վերջին հորիզոնականում:

# Բեյլը լավագույնն է Անգլիայում

Անգլիական «Տոտենհեմի» պաշտպան Գարեթ Բեյլը պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների ընկերակցության անցկացրած հարցման արդյունքներով ճանաչվել է Անգլիայի լավագույն ֆուտբոլիստ: Նա մրցույթում գերազանցեց իր հիմնական հակառակորդներ Սամիր Նասրիին («Արսենալ») եւ Կառլոս Տեւեսին («Մանչեսթր Սիթի»): Անգլիական ֆուտբոլի պատմության մեջ Բեյլը ուելսցի 4-րդ ֆուտբոլիստն է Իան Ռաշից, Մարկ Հյուզից եւ Ռայան Գիգզից հետո, որ արժանանում է նման պատվի:

«Այս մրցանակը մեծ ուրախություն պատճառեց ինձ: Դրան արժանանալը մեծ պատիվ է ինձ համար, մանավանդ որ տեղեկանում ես, թե քեզանից առաջ ինչպիսի ֆուտբոլիստների է մրցանակը հանձնվել», նշել է Բեյլը:

21-ամյա Բեյլը պայքարում էր նաեւ տարվա երիտասարդ լավագույն ֆուտբոլիստի տիտղոսի համար, սակայն նրան գերազանցեց Լոնդոնի «Արսենալի» 19-ամյա կիսապաշտպան Ջեկ Ուիլշիրը: Գարեթ Բեյլը 2007-ին «Տոտենհեմ» էր տեղափոխվել «Սաութհեմփթոնից» 8 մլն դոլարի դիմաց: Այդ ընթացքում նա թիմի կազմում անցկացրած 72 խաղում 12 գոլ է խփել, իսկ ընթացիկ մրցաշրջանում դարձել է թիմի առաջատարը:



Որոշվել է նաեւ պրեմիեր լիգայի խորհրդանշական հավաքականը, որն այսպիսին է. Էդվին վան դեր Սար («Մանչեսթր Յունայթեդ»), Բակարի Սանյա («Արսենալ»), Էշլի Քոուլ («Չելսի»), Նեմանյա Վիդիչ («Մանչեսթր Յունայթեդ»), Վենսան Կոմպանի («Մանչեսթր Սիթի»), Նանի («Մանչեսթր Յունայթեդ»), Սամիր Նասրի («Արսենալ»), Ջեկ Ուիլշիր («Արսենալ»), Գարեթ Բեյլ («Տոտենհեմ»), Կառլոս Տեւես («Մանչեսթր Սիթի»), Դիմիտար Բերբատով («Մանչեսթր Յունայթեդ»):

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Ծովարշավ

# Սարգիս Կուզանյան՝ կամբուզի «հրամանատար»

Երբ անցած ծովերի թիվը մոտենում է երեք տասնյակին, ապա ակամա սկսում ես համեմատել դրանք: Կարծում եմ, հարցն այստեղ չափերը չեն, թեեւ այստեղ էլ չափը նշանակություն ունի: Էականը գուցեեւ զգացմունքներն են, նույնիսկ տարիքը: Նույնիսկ եղանակը՝ փոթորիկը, անհողմությունը, տորնադոն: Սակայն կա եւս մեկ ցուցանիշ: Դա ծովի պատմությունն է, նրա այսպես ասած՝ կենսագրությունը: Սկզբում խոսքը տանք Աբել Թասմանին, որն առաջինն է այն հայտնագործել եւ որը, ինչպես ասում են, սիրում էր կղզիների շուրջը պտույտներ գործել, քանզի հանճարեղ քարտեզագիր լինելով՝ նկարագրում եւ գծագրում էր իր հայտնագործությունների ողջ աշխարհագրությունն ու նույնիսկ չափաճշգրտում: Այն աստիճան էր շտապում, որ նույնիսկ ժամանակ չուներ ոտք դնել բուն կղզիներ: Ի դեպ, 17-րդ դարի վերջին նա նկարագրել էր նորզելանդական կղզիները, սակայն որպես դրանց առաջին հայտնագործողի գիտենք Ջեյմս Կուկին, որը 18-րդ դարի վերջին անմիջականորեն ցամաքով «ճամփորդեց»: Սակայն ե՛ւ Թասմանը, ե՛ւ Կուկն իրենց օրագրերում պատմել են ծովերի բնավորության մասին: Մի քիչ առաջանալով այն ծովով, որն ապագայում իր անունն էր կրելու, Աբել Թասմանն ուշադրություն դարձրեց, որ այն հավերժաբար մի տեսակ հարբած է: Երբեք խաղաղ չի լինում: Այդ մասին ես հիշեցի, երբ հեռախոսով կապվեցի Օկլենդի մեր հայրենակցի հետ եւ հարցրեցի.

- Կարո՞ղ ենք խարիսխ նետել Հյուսիսային կղզու արեւմտյան կողմում ինչ-որ տեղ:

Սերժիկը բառացիորեն վրա տվեց.

- Չէ, ի՞նչ եք ասում: Այն կողմում ընդհանրապես մարդ չկա: Չէ՞ որ ծովն ուրիշ է այնտեղ: Մշտական ալիքներ են: Ասում են՝ հարբած են այդ ալիքները:

Այո, ափսոս: Եթե ծովը սթափ լիներ, այնտեղ նավահանգիստներ կլինեին, եւ մենք, կառանվելով «մյուս կողմում», կշահեինք երկու հարյուր մղոն: Ավելի արագ կհասնեինք Ավստրալիա, Մելբուռն:

Մի խոսքով, հիմա մենք սթափ ենք եւ զույգ աչքով ենք նայում հարբած ծովին: Մինչդեռ օդերեւութաբանները մեզ բոլորովին այլ տվյալներ են ուղարկում: Եվ իհարկե, նրանց չի կարելի մեղադրել: Չէ՞ որ հաղորդում են ե՛ւ ջերմաստիճանի, ե՛ւ քամու ուղղության, ե՛ւ արագության մասին, այն էլ՝ բավական ճշգրիտ: Օդերեւութաբաններին չի էլ հետաքրքրում Թասմանի ծովի հոգեվիճակը: Ինչ-որ տեղ կարդացել եմ, որ երբ Ավստրալիայից գնում ես դեպի Նոր Զելանդիա, ապա նույնիսկ անհողմության ժամանակ աջ այտիդ սառնություն ես զգում: Պարզ է, որ դա Անտարկտիդայի սառը շունչն է: Ջեյմս Կուկը նույնպես վստահում էր իր զգացողություններին, երբ մտածում էր, թե որտեղ է Հարավային մայրցամաքը: Այդ նրա մասին են ասել ժամանակակիցները. «Առաջին մարդը, որն ապացուցեց, որ Հարավային մայրցամաքը գտնվում է ոչ այնտեղ, որտեղ փնտրում էին»: Այնպես որ, արդեն չորրորդ օրն է (2011 թվականի ապրիլի 14-ին), որ «Արմենիա»-ն գնում է հարավ-արեւմտյան ուղղությամբ, ավելի ճիշտ՝ հարավ-արեւմտյան-արեւմտյան, շեղակի հատելով Թասմանի ծովը: Ճանապարհը տանում է Բասսի նեղուց, որն Ավստրալիայի հարավ-արեւելյան մասն անջատում է Թասմանիա կղզուց: Մեզ համար արդեն բոլորովին միեւնույնն է, թե ինչ կուղարկեն մեր թանկագին օդերեւութաբանները: Ես մեծ-մեծ չեմ բրդում: Դա իրոք այդպես է: Ինչպիսի կանխատեսում էլ ուղարկեն, միեւնույնն է, մենք պետք է անցնենք մեր երթագիծը, հակառակ բոլոր գիտական կանխատեսումների եւ մարդկային զգացմունքների: Միեւնույնն է, Թասմանի ծովի բնույթը չես փոխի: Բացի դրանից, այդ ամենին ընտելացել ենք: Ավելին, նույնիսկ զվարճանում ենք, երբ ճոճքի, ավելի ճիշտ՝ ճաշի ժամին Սեմն ու Արիկը հանկարծ լույսի արագությամբ երկու ձեռքով բռնում են սիսեռապուրով ափսեները եւ իրենց մետաղե բացովի աթոռներին նստած, օդաչուների պես «կատապուլտվում» են դեպի աջ նավակող: Մեկ րոպե անց, ասես ոչինչ էլ չէր պատահել, ապուրի խորն ափսեները ձեռքներին, ցատկոտելով մոտենում են սեղանի շուրջ իրենց մշտական տեղերին: Պետք է ասեմ, որ նման պահերին ճարպիկ Սաքոն ու Մուշեղը արագորեն «օդաչուներին» են հասցնում նրանց աթոռները: Այդ ամենն էլ վաղուց առօրյա է դարձել:





Իսկ եթե շարունակելու ենք աշխարհագրության թեման, ապա ասենք եւ այն մասին, որ Թասմանի ծովում կարող են տեղավորվել դպրոցականներին հայտնի ծովերից շատերը, այդ թվում՝ Միջերկրական, Սեւ, Բալթիկ եւ այլն: Նրա ջրերը ողողում են Ավստրալիան, Թասմանիա կղզին, Նոր Զելանդիայի, Նորֆոլկի եւ Նոր Կալեդոնիայի կղզիները: Եվ բացի այդ՝ նրա ջրերն են, որ Բասսի նեղուցի միջոցով Խաղաղ օվկիանոսը միացնում են Հնդկականին: Ի դեպ, ճանապարհը մեզ տանում է հենց Բասսի նեղուցի մեջտեղ, որտեղ գտնվում է Մելբուռն նավահանգիստը:

Իսկ այսօրվա նյութը նվիրվում է աշխարհագրությանը: Միայն թե պետք չէ կարծել, թե ընթերցողին պատրաստվում եմ ուղարկել դեպի դպրոցական դասագիրք, կամ ինչպես հիմա է մոդայիկ՝ ինտերնետային կայքեր: Իմ արխիվներում նյութեր են հավաքված ինտերնետի դարաշրջանից դեռ շատ առաջ: Բայց սկզբում, որքան էլ որ դա անսպասելի հնչի, մի քանի խոսք իտալացի հայտնի դատական հոգեբան եւ հանցագետ Չեզարե Լոմբրոզոյի տեսության մասին, որն առաջ է քաշել դրույթ՝ հանցանք գործելու հակում ունեցող առանձնահատուկ տեսակի մարդու գոյության մասին: Իրավագետները լավ տեղյակ են այդ ուսմունքին, որը կոչվում է լոմբրոզականություն: Լոմբրոզոյի հետեւորդներն ավելի հեռուն գնացին, գտնելով որ գոյություն ունի հանցանքի մի ինչ-որ գեն: Հիշո՞ւմ եք երբեմնի չափազանց սիրված «Թափառաշրջիկը» հնդկական ֆիլմը, որտեղ դատախազը՝ անտեղյակ, որ խոսքը սեփական որդու մասին է, արտասանում է իր տեսակետից գիտական մի նախադասություն. «Գողի որդին միշտ գող կլինի»:

Իսկ հիմա վերադառնանք Ավստրալիային: Եթե իրոք հավատանք լոմբրոզականների հետեւորդների մտավարժանքներին, ապա այսօր Ավստրալիա պետության եւ մայրցամաքի եվրոպական (մանավանդ՝ անգլիական) ծագում ունեցող հիմնական բնակչությունը պետք է կազմված լիներ հանցագործներից: Ուղիղ երկու հարյուր քսաներեք տարի առաջ, Արարատ քաղաքից ոչ հեռու գտնվող Պորտ Ջեկսոն նավահանգստում խարիսխ նետեց մի ամբողջ նավատորմիկ, Ավստրալիա մայրցամաք բերելով եվրոպական առաջին վերաբնակիչներին: Նրանք բոլորն առանց բացառության աքսորյալներ էին: Ահա թե ինչ է գրված «Ավստրալիա. պետություն եւ մայրցամաք» մենագրության մեջ, վկայակոչելով պաշտոնական փաստաթուղթը. «Դատարկել գերբեռնված նավամբարները եւ ազատվել սոցիալական անցանկալի տարրերից»: Այսպիսով, կատարվեց ամենաեզակի, ավելի շուտ՝ անհավանական մի բան. «բանտ դարձավ մի ողջ մայրցամաք, բանտ՝ բաց երկնքի տակ»: Դեռ շատ երկար էին այստեղ նավեր ժամանում Անգլիայից՝ անսովոր «բեռով», իսկ շուտով՝ ոչ միայն Անգլիայից: Ճիշտ է, պետության խելքը բավականացնում էր, որպեսզի ժամանակ առ ժամանակ ուղարկեին ոչ միայն տղամարդկանցով, այլեւ կանանցով բեռնված նավեր (կին հանցագործներ, ամենահին մասնագիտության ներկայացուցիչներ): Մնում է նշել՝ հղում կատարելով պատմագետներին, որ դրանից հետո մայրցամաքում հասակ առավ արի եւ ազնիվ մարդկանց մի ողջ սերունդ, որն սկսեց նորմալ պետություն կառուցել, գործուն հարգանք դրսեւորելով բնիկների նկատմամբ: Իսկ լոմբրոզականության հետեւորդները խորապես սխալվեցին: Ավստրալիայում հանցավորության վիճակի մասին կհետաքրքրվեմ տեղում: Բայց առայժմ կարելի է դատել, հիշելով Նոր Զելանդիան, որտեղ ապրում են բազմաթիվ ավստրալիացիներ: Հաճախ ես այնտեղ լսում, թե մարդիկ իրենց տների դռները չեն փակում: Հիշել ու գրի եմ առել նաեւ այս նախադասությունը. «Այստեղ պարզապես ձեռնտու չէ հանցագործ լինել»:

...Երբեմն ակամայից լսում ենք միմյանց ասածները: Ահա եւ ականջիս հասան մեր կոկ Սարգիս Կուզանյանի խոսքերը. «Հետաքրքրական է, իսկ Ավստրալիայում ո՞րն է ամենասիրված ճաշատեսակը»:

Լսելով դա, որոշեցի կոկին «հերթից դուրս» առաջ թողնել դեպի «դիմանկարի վրձնահարվածներ» վերտառություն:

- Այսօր հետաքրքրվում էիր ավստրալիական խոհանոցով, -սկսեցի ես հեռվից,- իսկ ինչո՞ւ ավելի վաղուց չէիր հետաքրքրվում: Չէ՞ որ արդեն մի քանի ուրիշ երկրներ էլ ենք անցել:

- Շատ էլ լավ հետաքրքրվել եմ: Դեռեւս Բուենոս Այրեսում իմացա բրնձից եւ վերմիշելից պատրաստված նրանց ֆիրմային կերակուրի մասին: Փորձեցինք, բայց ձեզ դուր չեկավ:

- Անձամբ ի՞նձ:

- Ոչ միայն: Այդ օրվանից էլ սկսեցի մանդրաժի մեջ ընկնել: Մտածում էի՝ պետք է շեշտը նրա վրա դնել, թե ինչն ենք կարողանում համեղ պատրաստել:

- Ճիշտ էիր մտածում: Մեկ անգամ չէ, որ հեռախոսով խոսել ես ծնողներիդ եւ քույրիկիդ հետ՝ Վազգենի, Անահիտի եւ Տաթեւիկի: Ինչի՞ մասին ես զրուցում նրանց հետ: Չէ՞ որ առաջին անգամն ես...

- Ես իհարկե չեմ բացահայտում, թե ինչ է կատարվում իմ հոգում: Պարզապես ասում եմ, որ ամեն ինչ նորմալ է, ամեն ինչ լավ է գնում: Ամեն ինչ հետաքրքրական է ինձ:

- Այ, տուն հասնելուց հետո, ինչպես եւ մյուս բոլորը, սկսելու եմ պատրաստվել ծովարշավը շարունակելուն, մինչեւ որ «Արմենիա»-ն շրջի բոլոր հայկական գաղութներում: Իսկ դու ի՞նչ ես անելու:

- Ես պետք է ազնվորեն խոստովանեմ: Բանն այն է, որ սրանից առաջ երբեք այսքան երկար ժամանակով տնից չէի հեռացել: Չգիտեի, որ տան կարոտն ինձ այսքան ուժգին տանջելու է: Համ էլ մայրս էլ մի կողմից է միշտ կրկնում, թե ամուսնանալուս ժամանակն է:

Ես գիտեմ եւ համոզված եմ, որ երբ Սարգիսը տուն վերադառնա, նրան արդեն այլ կարոտ է տանջելու: Ծովի կարոտը: Չեմ կարող ասել, թե ինչպես կդասավորվի նրա այսպես ասած՝ ծովային ճակատագիրը: Աստված երջանկություն տա նրան: Իսկ առայժմ տղայի մոտ ամեն ինչ ստացվում է: Եվ հարցը Սաքոյի ծովային խոհարարության բարձրունքների մեջ չէ: Շատ ավելի կարեւոր է, որ ամենաարտակարգ իրավիճակում անգամ նա չի լքում իր տեղը: Դա շատ կարեւոր է: Չէ՞ որ փոթորկի ժամանակ թե՛ ֆիզիկապես, թե՛ գործնականում անհնար է կանգնել ճոճվող սալիկի առջեւ: Շատ կարեւոր է, երբ պատասխանատվության զգացումը ամեն ինչից վեր է: Եվ իրոք, այս տղան իր աշխատատեղը վերածել է պոստի՝ աշխատանքը՝ հերթափոխի: Սարգիսը կամբուզի իսկական «հրամանատար» է:

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**

**Թասմանի ծով**

# ԿՀՎ-ն հրապարակել է անտեսանելի թանաքի բաղադրատոմսեր

ԿՀՎ-ն երեկ հրապարակել է 1-ին աշխարհամարտի ժամանակ գաղտնիացված 6 փաստաթուղթ, որոնք համարվում էին վարչության ամենահին գաղտնի փաստաթղթերը: Այդ մասին հաղորդում է Ֆրանս պրեսը:

Գաղտնազերծված 1917 եւ 1918 թ. փաստաթղթերում կան անտեսանելի թանաքի պատրաստումը երկաթի սուլֆատի, ցիանային կալիումի եւ բրձնի օսլայի հիման վրա՝ ջրի եւ սովորական թանաքի հավելումով: Երեւակելու համար անհրաժեշտ էր կիրառել կալիումի յոդատի եւ գինեթթվի ջրային լուծույթ: 1918-ին ֆրանսերեն գրված մեկ ուրիշ փաստաթուղթ պատմում է գերմանական անտեսանելի թանաքի բաղադրության մասին:

Անտեսանելի թանաքին վերաբերող տեղեկությունները ըստ երեւույթին այնքան կարեւոր էին, որ 1976-ին ԿՀՎ-ն հրաժարվել էր վերացնել գաղտնիությունը:

ԿՀՎ տնօրեն Լեոն Պանետտան ասել է, որ գրեթե հարյուր տարի գաղտնի մնացած փաստաթղթերի հրապարակումը «հնարավոր դարձավ տեխնիկայի վերջին նվաճումների շնորհիվ», չնշելով այլ մանրամասնություններ:

2010-ին ԿՀՎ-ն հանրությանը մատչելի է դարձրել 11,1 մլն էջ կազմող փաստաթղթեր, իսկ 1995-ից մինչեւ օրս՝ ավելի քան 30 մլն էջ: Գերատեսչության արխիվների մի մասը մատչելի է CIA.gov կայքում:

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում եւ վերջինիս միջոցով իրականացնելու է «Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառք հրապարակային սակարկություններով՝

- Բնակելի տուն, ընդ. մակերեսը՝ 82.0 քմ եւ 0.01863 հա հողամաս: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Ավան վարչական շրջան, Ավան 4-րդ փողոց, 1-ին նրբանցք, 33:Մեկն. գինը՝ 8000000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 06.05.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00-17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուր. օր ժամը 11.00 – 20.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնման առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :

**Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.webstand.am կայքում**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:

Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 20.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: